
ISSN 1829-0280

ԲԱՆԲԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ



ВЕСТНИК

АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ЭКОНОМИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА

MESSENGER

OF ARMENIAN STATE UNIVERSITY OF ECONOMICS

2022 [4]
ԵՐԵՎԱՆ



ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՍԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՊՏՀ լեզուների ամբիոնի վարիչ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
https://orcid.org/0000-0002-3499-4862

ՌՈՒԶԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՊՏՀ լեզուների ամբիոնի դոցենտ,
մանկավարժական գիտությունների թեկնածու
https://orcid.org/0000-0003-1996-3483

ԱԼԼԱ ՄԿՐՏՉՅԱՆ
ՀՊՏՀ լեզուների ամբիոնի դոցենտ,
մանկավարժական գիտությունների թեկնածու
https://orcid.org/0000-0001-7855-0756

ԼԻԼԻԹ ՀԱԿՈԲՅԱՆ
ՀՊՏՀ լեզուների ամբիոնի ասիստենտ
https://orcid.org/0000-0001-8459-6718

ԷՔՍՊԵՐԻՄԵՆՏԱԼ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ. ԼԵԶՈՒՆԵՐԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԱՅԻՆ-ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀՊՏՀ ՕՐԻՆԱԿՈՎ

Գնահատումը ժամանակակից գործիք է՝ վերափոխելու ապագայի կրթությունը:

Քերոլ Էնն Թոմլինսոն

Յուրաքանչյուր դասընթացի արդյունք ենթադրում է սովորողի կողմից փվյալ դասընթացի բովանդակության կամ վերջնարդյունքների յուրացում: Վերջնարդյունքների յուրացման աստիճանի գնահատման ձևերի և մոտեցումների ընտրությունը խնդրո առարկա է եղել դասավանդման մեթոդաբանության պատմության բոլոր փուլերում: Տվյալ հոդվածը անդրադառնում է լեզուների իմացության գնահատման հիմ-

նախնդրին: Էքսպերիմենտալ դասավանդման շրջանակներում 2021–2022 թթ. ուստարվա երկրորդ կիսամյակից ՀՊՏՀ լեզուների ամբիոնը նախաձեռնել է գնահատման բաղադրիչային-կուտակային համակարգի կիրառումը լեզուների դասավանդման գործընթացում: Հիմնվելով փվյալ համակարգի փորձաշրջանի գործարկման, դասախոսների և ուսանողների շրջանում անցկացված հարցման, ֆոկուս քննարկումների և ՍՎՈՒԹ (SWOT) վերլուծության արդյունքների վրա՝ հեղինակներն առաջարկում են իրականացնել որոշակի լրամշակումներ և փոփոխություններ՝ համակարգն ավելի կիրառելի և արդյունավետ դարձնելու նպատակով:

Հիմնաբառեր. *լեզուների իմացություն, լեզուների դասավանդում, լեզուների իմացության գնահատման համակարգ, էքսպերիմենտալ դասավանդում*

JEL: D83, I21, I23
DOI: 10.52174/1829-0280_2022.4-156

Ներածություն: Հայտնի է, որ յուրաքանչյուր դասընթացում գնահատման գործոնը հանդես է գալիս որպես խթան ուսանողների համար և մեծապես նպաստում է դասավանդման գործընթացի հաջող իրականացմանը: Լեզուների իմացության մակարդակի գնահատման խնդիրները արդիական են եղել լեզուների դասավանդման բոլոր մեթոդները կիրառելիս, քանի որ գիտելիքի գնահատումն ապահովում է ուսանողների կարիքների վերհանում, նրանց առաջընթացի ճշգրիտ գրանցում և հնարավորություն է տալիս դասախոսին կողմնորոշվելու՝ արդյոք տվյալ դասընթացը ճիշտ է կազմված, թե անհրաժեշտ են որոշակի շտկումներ:

Գոյություն ունեն լեզուների իմացության մակարդակի գնահատման բազմաթիվ եղանակներ, որոնք տարբերվում են իրենց նպատակներով՝ ըստ բաղադրիչների, հաղորդակցական տարբեր հմտությունների, տվյալ դասընթացում առաջընթացի գրանցման, լեզվի իմացության մակարդակի սահմանման և այլն: ՀՊՏՀ-ում լեզուների դասընթացների, մասնավորապես՝ *«Ռուսաց լեզու», «Մասնագիտական օտար լեզու – 1,2,3,4» և «Հայոց լեզու և գրականություն»* առարկայական ծրագրերը ցուցանշում են հստակ վերջնարդյունքներ, որոնց ուսանողը պետք է տիրապետի դասընթացի ավարտից հետո: Դրանք հետևյալն են՝

- զարգացնել և ամրապնդել ուսանողի՝ մայրենի, օտար, ռուսերեն լեզուներով գործարար բանավոր և գրավոր հաղորդակցման հմտությունները,
- հարստացնել ուսանողի՝ մայրենի, օտար, ռուսերեն լեզուներով մասնագիտական բառապաշարը համապատասխան մասնագիտական տերմիններով,
- զարգացնել ուսանողի՝ որոշակի մասնագիտական իրադրություններում լեզվական ունակությունները կիրառելու հմտությունները,
- հատուկ ուշադրություն դարձնել ուսանողի խոսակցական լեզվի զարգացմանը՝ հաշվի առնելով գործարարական վարվելակերպը,
- ուսանողին փոխանցել մայրենի, օտար, ռուսերեն լեզուներով պաշտոնական նամակներ և գրություն կազմելու հմտություններ:

Վերոնշյալ վերջնարդյունքներն ապահովելու համար ՀՊՏՀ լեզուների ամբիոնը վերջին շրջանում նախաձեռնել է էքսպերիմենտալ մի շարք գործըն-

թացներ, որոնցից է գնահատման բաղադրիչային-կուտակային համակարգի ներդրումը լեզուների դասավանդման գործընթացում:

Գրականության ակնարկ: Հասարակական կյանքում տեղի ունեցող առանցքային փոփոխությունների շարքում ուսուցման գործընթացի կատարելագործման խնդիրը առանձնահատուկ կարևորություն է ստանում, և այդ փոփոխությունների արդյունքում ուսուցման բոլոր մակարդակներում փոխվում են նաև դասավանդողի գործունեության բովանդակությունն ու մեթոդները:

Մանկավարժական վերահսկողությունը (գնահատումը) ուսուցման արդյունավետության կարևորագույն գործոններից մեկն է, քանի որ իրականացնում է դիդակտիկ գործընթացի զարգացման օրինաչափությունները:

Ինչպե՞ս գնահատել ուսանողի ձեռքբերումների մակարդակը, ի՞նչ կարելի է գնահատել. սրանք մանկավարժության «հավերժական» հարցերից են: Կրթական համակարգի զարգացման բոլոր փուլերում ժողովրդավարական սկզբունքների ամրապնդմամբ նախ առաջադրվում է գնահատման գործառույթի իրականացման արդյունավետ ուղիներ գտնելու հարցը:

Գիտական գրականության մեջ առանձնացնում են գնահատման իրար հակադիր երկու համակարգ՝ ամփոփիչ գնահատում (summative assessment) և ձևավորող գնահատում (formative assessment): Ամփոփիչ գնահատումը կատարվում է դասընթացի ավարտին: Գնահատման այդ եղանակի հիմնական նպատակը սովորողների գիտելիքների ստուգումն է: Ձևավորող գնահատումն իրականացվում է ողջ դասընթացի ընթացքում: Գնահատման այս եղանակի հիմնական նպատակն է ստուգել սովորողների առաջընթացը՝ հետագայում ուսումնական գործընթացը բարելավելու և էլ ավելի արդյունավետ կազմակերպելու համար[1]: Ձևավորող գնահատման համակարգի արդյունավետության մասին առաջինը խոսել են Փոլ Բլեքը և Դիլան Ուիլյամը[2]:

Ամփոփիչ գնահատման դասական օրինակ է ամփոփիչ ստուգարքը կամ քննությունը: Սովորողների գիտելիքները ստուգարքի կամ քննության «մեկանգամյա» պատասխանով գնահատելու ավանդական համակարգը վաղուց արդեն սպառել է իրեն: Մասնագիտական գրականության մեջ գնահատման ավանդական համակարգի թերությունների մասին բազմիցս նշվել է: Հիմնական թերությունները վերաբերում են մանկավարժական սուբյեկտիվիզմին, գնահատման չափանիշների անբավարար զարգացմանը, թույլ դիֆերենցիալ ունակությանը և այլն:

Վարկանշային համակարգը ձևավորող գնահատման համակարգի տարբերակներից մեկն է: Ուսումնական գործընթացում նշված համակարգի կիրառումը սովորողներին թույլ է տալիս հասկանալ իրենց ուժեղ ու թույլ կողմերը և մտածել արդյունքները բարելավելուն ուղղված անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու մասին[3]:

---

[1] Տե՛ս **Fisher Michael R. Jr.,** Student Assessment in Teaching and Learning URL https://cft.vanderbilt.edu/student-assessment-in-teaching-and-learning

[2] Տե՛ս **Black Paul** & **Wiliam Dyllan,** Assessment and Classroom Learning, Assessment in Education: Principles, Policy & Practice, 1998. URL: https://www.tandfonline.com/doi/abs/10.1080/0969595980050102

[3] Տե՛ս **Maki Peggy L.,** Developing an Assessment Plan to Learn about Student Learning. The Journal of Academic Librarianship 28.1, 2002, էջ 8–13: ScienceDirect. Web. The Journal of Academic Librarianship, էջ 11:

Մինչ նոր՝ վարկանշային գնահատման համակարգին անցումը կրթական հաստատությունները որոնում էին «հին» համակարգը տարբեր միջոցներով բարելավելու ուղիներ, որոնց շարքում կարելի է առանձնացնել հետևյալը[4]՝

- գնահատականի նշանակում «+» կամ «–» նշաններով,
- թվային, միավորային համակարգի լրացում/համալրում «բառային» տարբերակով,
- գնահատականի նշանակում մեկնաբանություններով՝ ուղղված սովորողներին և/կամ նրանց ծնողներին (դպրոցի աշակերտներին գնահատելիս),
- առաջընթացն արձանագրող էկրանների կիրառում,
- հենց իր հետ մրցակցության կազմակերպում և այլն:

Գնահատման վերոնշյալ բոլոր մեթոդներն ունեն և՛ առավելություններ, և՛ թերություններ:

Որպես կրթական համակարգի նորարարական գործիքներ՝ այսօր լայնորեն կիրառվում են թեստավորումը, գնահատման մոդուլային և վարկանշային համակարգերը, գիտելիքների որակի գնահատումը, մշտադիտարկումը և ուսումնական թղթապանակը (պորտֆոլիոն):

Աշխարհի առաջատար կրթական հաստատությունները (մասնավորապես՝ բարձրագույն ուսումնական հաստատությունները) ավանդականից վաղուց տեղափոխվել են գնահատման միավորային-վարկանշային, կուտակային համակարգ: «Սովորողների գնահատման արտասահմանյան համակարգերը, դրանց գործուն կայացումը և զարգացումը քսաներորդ դարի երկրորդ կեսին ձևավորվել են հիմնականում որպես կուտակային»[5]: Վերջին տարիներին գնահատման միավորային-վարկանշային համակարգերը ակտիվորեն մշակվում, կիրառվում ու կատարելագործվում են ինչպես ռուսաստանյան (սկսած 2010 թ.), այնպես էլ հայաստանյան բուհերում:

Սովորողների գիտելիքների մշտադիտարկման վարկանշային համակարգի ներդրումը պայմանավորված է կրթական գործունեությունը խթանելու և սովորողների ճանաչողական ակտիվությունը մեծացնելու անհրաժեշտությամբ՝ գնահատական ստանալու հնարավորության միջոցով: Այսօր անհրաժեշտ է ստեղծել նպաստավոր պայմաններ կրթական փոխգործակցության բոլոր մասնակիցների անհատական ներուժի դրսևորման և խթանման համար: Դա շատ ավելի դյուրին կդառնա գիտելիքների գնահատման վարկանշային համակարգով, որը կարելի է համարել սահմանված առաջադրանքների կատարման հնարավոր եղանակներից մեկը:

Սովորողների գիտելիքների և հմտությունների մշտադիտարկման վարկանշային համակարգի ներդրումը առանձնահատուկ արդիականություն ստացավ COVID-19 համավարակի և, դրանով պայմանավորված, կրթական

---

[4] Տե՛ս **Шилова Н.С.,** Традиционная и инновационная система оценивания учащихся // Образовательная социальная сеть nsportal.ru URL: https://nsportal.ru/shkola/obshchepedagogicheskie-tekhnologii/library/2012/09/23/traditsionnaya-i-innovatsionnaya

[5] **Сазонов Б. А.**, Балльно-рейтинговые системы оценивания знаний и обеспечение качества учебного процесса // Высшее образование в России, №6, 2012. URL: https://cyberleninka.ru/article/n/ballno-reytingovye-sistemy-otsenivaniya-znaniy-i-obespechenie-kachestva-uchebnogo-protsessa

հաստատությունների մեծ մասի ուսուցումը հեռավար ձևաչափով կազմակերպելու հարցում, երբ դասավանդողները դժվարությունների էին բախվում սովորողներին առցանց գնահատելու գործընթացում:

Հարկ է նշել, որ գնահատման «վարկանշային համակարգ» եզրույթի հետ մեկտեղ օգտագործվում է ևս մեկը՝ սովորողների ձեռքբերումների գնահատման *կուտակային համակարգը*: Չնայած այն հանգամանքին, որ երկու տերմիններն էլ հաճախ գործածվում են որպես հոմանիշներ, այնուամենայնիվ, կան հեղինակներ, որոնք վստահեցնում են, որ դրանք տարբերվում են իմաստային երանգներով: Այսպես՝ Է. Վ. Մայկովը «վարկանշային» կամ «միավորային-վարկանշային» համակարգ տերմինները համարում է ոչ այնքան հաջողված՝ որպես հիմնավորում նշելով այն հանգամանքը, որ «միայն քննության հիման վրա սովորողին դրված ամփոփիչ գնահատականը (անկախ կիսամյակի ընթացքում տեղի ունեցածից) նույնպես միավոր և վարկանիշ է»: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քննարկվող համակարգի հիմքում «կիսամյակի ընթացքում սովորողի միջանկյալ գնահատականների կուտակումը և վերջին դասաժամին դրանց գումարի հաշվառումն է», Մայկովը հանգում է այն եզրակացության, որ «ավելի բնական է այս համակարգն անվանել կուտակային, կումուլյատիվ»[6]:

«Վարկանիշ» բառը ծագում է անգլերեն «to rate» (գնահատել) և «rating» (գնահատում) բառերից: Այսպիսով՝ վարկանիշը «կուտակված գնահատականն» է կամ «գնահատական, որը հաշվի է առնում նախապատմությունը»:

Առավել ընդհանրական ձևաչափով սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման վարկանշային տեխնոլոգիան հիմնված է ընթացիկ աշխատանքների կամ պարբերաբար իրականացվող վերահսկողական միջոցառումների ընթացքում նրանց կուտակած գնահատականները հաշվի առնելու սկզբունքի վրա: Ի տարբերություն գնահատման ավանդական եղանակի՝ վարկանշային տեխնոլոգիան ենթադրում է որոշակի ժամանակահատվածի ընթացքում սովորողի գնահատականների պարբերական ամփոփում սահմանված կարգով:

Վերահսկման ավանդական մեթոդով գնահատման համակարգը դասավանդման առումով սխալ ուղղորդվածություն ունի. կառուցված է «հանման, նվազման» մեթոդի հիման վրա: Այլ կերպ ասած՝ սկզբնակետը որոշակի նշաձողն է (խորհրդային տարիներին՝ 5, ՀՀ ժամանակակից դպրոցական կրթության համակարգում՝ 10, ՀՀ բարձրագույն կրթության համակարգում՝ 20 կամ 100), և, կախված սովորողի կատարած բացթողումներից ու սխալներից, գնահատականը նվազում է:

Սա հնարավորություն չի տալիս գնահատման բավարար չափով բովանդակալից, իմաստալից չափանիշներ ներդնելու: Բացի այդ, գնահատումը դառնում է «պատժի» տեսակ, այլ ոչ թե սովորողի ձեռքբերման մակարդակի խրախուսման և ապացուցման միջոց: Այլընտրանքը գնահատումն է՝ «ավելացում, գումարում» մեթոդով (ամփոփում), որը հիմնված է ուսուցման նվազագույն մակարդակի վրա: Յուրաքանչյուր սովորողից պահանջվում է առանց ձախողման հասնել այս մակարդակին: Ավելի բարձր մակարդակ-

[6] **Майков Е.В.,** Накопительная система оценки успеваемости студентов // Вестн. Моск. ун-та., сер. 20, Педагогическое образование, №2, 2008. URL https://cyberleninka.ru/article/n/nakopitelnaya-sistema-otsenki-uspevaemosti-studentov/

ների գնահատման չափանիշները կազմվում են նվազագույնի հիման վրա՝ խորությամբ կամ ծավալով իմաստային մեծացման միջոցով[7]:

Գիտելիքների վերահսկման վարկանշային համակարգը՝ որպես տարբեր դասընթացների հաջող իրացման միջոց, կարող է զգալիորեն բարձրացնել ինչպես դասավանդողի, այնպես էլ հենց սովորողների գործունեության արդյունավետությունը՝ պայմանավորված հետևյալ գործոններով[8].

- դասի որոշակի թեմայի, հետևաբար նաև ամբողջ դասընթացի (կամ առարկայի) հանդեպ սովորողների առավելագույն հնարավոր հետաքրքրության խթանում,
- բոլոր սովորողների ներգրավում,
- սովորողի մտածողության ու վարքի շրջադարձ ավելի արդյունավետ և գործուն որոնողական գործունեության ուղղությամբ,
- տարբեր բնույթի աշխատանքների համար սովորողի ստացած գնահատականների նշանակության տարբերակում,
- ստացած գնահատականը բարելավելու հնարավորություն:

Կուտակային գնահատման համակարգը ներմուծելիս հետազոտողները նկատում են հետևյալ դրական կողմերը.[9]

- սովորողների կարգապահության մակարդակի բարձրացում,
- սովորողների կազմակերպվածության աստիճանի բարձրացում,
- ուսումնական գործընթացում հոգեբանական հարմարավետության զգացողության ուժեղացում,
- գնահատականի օբյեկտիվության ապահովում,
- սովորողների միջև մրցակցային տարրի սրում,
- դասավանդող անձնակազմի աշխատանքի ակտիվացում,
- դասավանդողների կողմից կրթական միջավայրի կառավարման մակարդակի բարձրացում:

Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ գնահատման այս համակարգի հիմնական առավելությունն այն է, որ «կոմպետենցիաների տիրապետման աստիճանը գնահատելու բոլոր համակարգերից վարկանշայինը թույլ է տալիս ավելի օբյեկտիվ գնահատել սովորողների գիտելիքները, հմտությունները և փորձը, խթանում է նյութերն ինքնուրույն փնտրելու ցանկությունը, ինչը հնարավորություն է տալիս զարգացնելու սովորողների հետաքրքրությունը նյութի ուսումնասիրության նկատմամբ՝ վերջիններիս պասիվ ունկնդիրների կատեգորիայից տեղափոխելով ակտիվ մասնակիցների կատեգորիա»[10]:

---

[7] Տե՛ս **Клепикова Е.И.,** Система оценивания учащихся // Образовательная социальная сеть nsportal.ru URL https://nsportal.ru/shkola/materialy-metodicheskikh-obedinenii/library/2014/02/12/sistema-otsenivaniya-uchashchikhsya

[8] Տե՛ս **Ахмедханова С. М.,** Рейтинг как одна из технологий объективной оценки личностных достижений учащихся // Молодой ученый, № 12 (59), 2013, էջ 400-402: URL: https://moluch.ru/archive/59/8335/

[9] Տե՛ս **Малышева Т. В.,** Практика внедрения балльно-рейтинговой системы оценивания результатов обучения студентов ссуза // Актуальные вопросы современной педагогики: материалы IV Междунар. науч. конф., Уфа, ноябрь, 2013, էջ 170-173: URL: https://moluch.ru/conf/ped/archive/97/4425/

[10] **Чепурная М.Н.,** Рейтинговая система оценивания результатов обучения как средство повышения качественного профессионального образования // Инновационная наука, №10-1, 2021.

Հետազոտության մեթոդաբանություն: Տվյալ հետազոտությունը նպատակ ունի գնահատելու 2021–2022 թթ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում ՀՊՏՀ լեզուների ամբիոնի կողմից շրջանառության մեջ դրված լեզուների գնահատման բաղադրիչային-կուտակային համակարգի արդյունավետությունը, բացահայտելու դրա ուժեղ ու թույլ կողմերը: Այս նպատակն իրականացնելու համար հոդվածում կիրառվել են ՍՎՈՒԹ վերլուծության, ֆոկուս քննարկումների, հարցումների անցկացման և վիճակագրական մոդելավորման քանակական վերլուծության մեթոդները:

Ինչպես հայտնի է, ՍՎՈՒԹ վերլուծությունը ռազմավարական պլանավորման առանձին փուլ է, որը ենթադրում է տեղեկատվության գնահատում, կազմակերպում և դրա հիման վրա պլանավորում և իրականացում: Այսպիսով՝ ՍՎՈՒԹ վերլուծությունը ներառում է 4 տարր՝ ուժեղ ու թույլ կողմեր, հնարավորություններ և սպառնալիքներ: Գնահատման գործող համակարգի փորձաշրջանում աշխատել ենք արձանագրել այն գործոնները, որոնք նպաստում են դրա արդյունավետ կիրառմանը, ինչպես նաև վեր հանել այն խոչընդոտները, որոնք խաթարում են տվյալ գործընթացի սահուն իրականացումը՝ հաշվի առնելով, անշուշտ, այլ հնարավորություններ, որոնք տրամադրում է համակարգը:

Տվյալների հավաքագրումը ընթացել է նախ լսարանային դիտարկումների միջոցով՝ արձանագրելով ուսանողների արձագանքը և առաջընթացը համակարգի կիրառման ժամանակ, այնուհետև դասախոսների շրջանում ֆոկուս խմբերի քննարկումների միջոցով, ինչը թույլ է տվել կատարել նաև ընթացիկ շտկումներ ու հարմարեցումներ արդեն իսկ գործող համակարգում: Բացի այդ, կիսամյակի ավարտին հարցումներ են անցկացվել ՀՊՏՀ լեզուների ամբիոնի բոլոր դասախոսների (33), առաջին և երկրորդ կուրսերի ուսանողների (570) շրջանում՝ համակարգը կիրառելիս առաջ եկած խնդիրներն ու խոչընդոտները բացահայտելու, ինչպես նաև տվյալ համակարգը լավարկելու առաջարկներ ստանալու նպատակով: Հարցաթերթիկն ընդգրկել է առանձին հարցաշարեր ուսանողների և դասախոսների համար:

Վերլուծություն: ***Նախկին գնահատման համակարգից հրաժարվելու և նորին անցնելու նախադրյալները***

1. ՀՊՏՀ լեզուների ամբիոնի շրջանակներում դասավանդվող առարկաների նախկինում գործող գնահատման համակարգը թույլ էր տալիս մեկ գնահատականով ձևավորելու ակտիվության նիշը, որի պատճառով քաջատեղյակ ուսանողների զգալի մասը նախընտրում էր մեկ անգամ լավ պատրաստվել ու ստանալ մեկ բարձր գնահատական՝ այդպիսով ապահովելով տվյալ առարկայի վերջնական բարձր միավորը: Էլեկտրոնային մատյանը ընդամենը մեկ գնահատականի առկայությամբ ձևավորում է ուսանողի ակտիվության միավորը՝ այդպիսով ոչ ամբողջական պատկերացում տալով ուսանողի գիտելիքի վերաբերյալ:
2. Յուրաքանչյուր դասընթաց ենթադրում է որոշակի վերջնարդյունքներ, և, այս առումով, մեկ գնահատականը հնարավորություն չի տալիս գնա-

URL, https://cyberleninka.ru/article/n/reytingovaya-sistema-otsenivaniya-rezultatov-obucheniya-kak-sredstvo-povysheniya-kachestva-professionalnogo-obrazovaniya

հատելու այն գիտելիքը և հմտությունների շարքը, որոնք թիրախավորված են առարկայական ծրագրերում: Այլ կերպ ասած՝ մեկ գնահատականը չի կարող լիարժեքորեն արտացոլել, համապարփակ ու ընդգրկուն ներկայացնել թե՛ դասախոսի սովորեցրածը և թե՛ ուսանողի գիտելիքը տվյալ առարկայից:

3. Վերը նշվածով պայմանավորված՝ կարող ենք արձանագրել նաև, որ գնահատման նախկին համակարգի գործարկման պայմաններում չէին խրախուսվում ուսանողի բարեխղճությունը, կարգապահությունը: Ուսումնական ողջ կիսամյակի ընթացքում բարեխղճորեն սովորած, պարտաճանաչ ուսանողն ու մեկ պատասխանով իր համար վերջնական գնահատական ապահոված ուսանողը հայտնվում էին հավասար պայմաններում, ստանում նույն կամ մոտ գնահատական՝ այդպիսով խարխլելով նաև արդարության մասին պատկերացումները: Այսինքն՝ ստեղծվում էին անարդար, անհավասար պայմաններ, որտեղ, փաստորեն, գնահատվում էր ոչ թե իրական սովորողը, այլ ճարպիկը: Արդյունքում տեղի էր ունենում ուսանողների շահադրդման մակարդակի նվազում:
4. Մեկ գնահատականի շնորհիվ ակտիվության ապահովման գործոնը չէր խթանում ուսանողների ակտիվ հաճախելիությունը դասընթացին, ինչպես նաև ակտիվ մասնակցությունը:

Տվյալ հանգամանքներից ելնելով՝ անհրաժեշտություն առաջացավ մշակելու գնահատման նոր համակարգ, որը կօգներ լիարժեքորեն լուծելու այս խնդիրը՝ տարբեր բաղադրիչներով ստուգելով ուսանողի գիտելիքը և հստակ պատկերացում տալով տվյալ դասընթացի վերաբերյալ վերջինիս ձեռք բերած հմտությունների մասին:

Գնահատման նոր համակարգի մշակումը և ներդրումը

2021-2022 թթ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակից ՀՊՏՀ լեզուների ամբիոնն անցավ գնահատման բաղադրիչային-կուտակային համակարգին՝ այս սկզբունքը կիրառելով ամբիոնում դասավանդվող բոլոր լեզուների (հայերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն և ֆրանսերեն) գնահատման գործընթացն իրականացնելիս:

Վերոնշյալ համակարգի համար մշակվել են մի շարք չափանիշներ: Առավելագույնը ***12/8*** միավոր ակտիվություն ունեցող դասընթացի գնահատականը ձևավորվում է ըստ աղյուսակ 1-ում ներկայացված բաղադրիչների:

Աղյուսակ 1

Առավելագույնը 12/8 միավոր ակտիվություն ունեցող դասընթացի գնահատման բաղադրիչներ

1. Տնային աշխատանքի ստուգում (տեքստի վերարտադրում, վարժությունների կատարում, 5 տնային աշխատանք՝ յուրաքանչյուրը 0,6/0,4 միավոր)	0-3/0-2 միավոր
2. Մեկ շնորհանդես/պրեզենտացիա (գործարար առաջարկի հակիրճ ներկայացում՝ pitching)	0-3/0-2 միավոր
3. Գործարար նամակագրություն (I կիսամյակ - ռեզյումե, ինքնակենսագրություն, II կիսամյակ - ուղեկցող նամակ, նամակ-հարցում, III կիսամյակ - նամակ-բողոք, նամակ-հրավեր, IV կիսամյակ – նամակ-ներողամտության հայցում, նամակ-շնորհավորանք) (առաջադրանքի կատարման տևողությունը՝ 20 րոպե)	0-3/0-2 միավոր
4. Գրավոր թեստ՝ կիսամյակի ընթացքում ուսումնասիրած նյութի հիման վրա (առաջադրանքի կատարման տևողությունը՝ 30/20 րոպե)	0-3/0-2 միավոր

Այսպիսով՝ դասախոսը արձանագրում է կիսամյակի ընթացքում ուսանողի կուտակած միավորները՝ ըստ վերը նշված բաղադրիչների, և կիսամյակի ավարտին թե՛ թղթային, թե՛ էլեկտրոնային մատյանում նշանակում է միայն *մեկ գնահատական:*

Շնորհանդեսի գնահատման չափորոշիչները առավելագույնը *12/8 միավոր* ակտիվություն ունեցող դասընթացի համար սահմանվել են աղյուսակ 2-ում նշված համամասնությամբ:

Աղյուսակ 2

Շնորհանդեսի գնահատման չափորոշիչները առավելագույնը 12/8 միավոր ակտիվություն ունեցող դասընթացի համար

1.	Ներկայացումը ստեղծագործական է և տեսանելիորեն գրավիչ, կազմված է առնվազն տասը նկարից	0.3/0.2 միավոր
2.	Ներկայացումը հետաքրքիր է լսարանի համար	0.3/0.2 միավոր
3.	Տեղեկատվությունը ներկայացված է տրամաբանական հաջորդականությամբ	0.3/0.2 միավոր
4.	Ներկայացումն ունի ներածություն և եզրակացություն	0.3/0.2 միավոր
5.	Նյութի ծավալը բավարար է ընտրված թեման ներկայացնելու համար	0.3/0.2 միավոր
6.	Բովանդակությունը տեսանելիորեն հետաքրքիր է. տեքստային մասը սահիկներում կազմում է 10-30%	0.3/0.2 միավոր
7.	Ուսանողների ելույթներում/տեքստում օգտագործվում է թեմային համապատասխանող բառապաշար	0.3/0.2 միավոր
8.	Ուսանողները շնորհանդեսի շրջանակներում բովանդակալից պատասխաններ են տալիս դասախոսների և համակուրսեցիների հարցերին	0.3/0.2 միավոր
9.	Բոլոր նախադասությունները կառուցված են գրագետ և ունեն տարբերակիչ կառուցվածք	0.3/0.2 միավոր
10.	Ելույթն արտահայտիչ է, համապատասխանում է արտասանական նորմերին	0.3/0.2 միավոր
	Ընդհանուր	***3/2 միավոր***

Գործարար նամակագրության գնահատման չափորոշիչները առավելագույնը *12/8 միավոր* ակտիվություն ունեցող դասընթացի համար սահմանվել են աղյուսակ 3-ում նշված համամասնությամբ:

Աղյուսակ 3

Գործարար նամակագրության գնահատման չափորոշիչները առավելագույնը 12/8 միավոր ակտիվություն ունեցող դասընթացի համար

1. Հանձնարարության բովանդակային մասի լիարժեք կատարում (անդրադարձ է կատարվում գրության պահանջների բոլոր կետերին)	0.3/0.2 միավոր
2. Գրության կառուցվածք (ներածության, հիմնական մասի, եզրակացության պարտադիր առկայություն, պարբերությունների տրամաբանական բաշխում, նախադասությունների կապակցված շարադրում)	0.3/0.2 միավոր
3. Քերականական սխալների գնահատում (ճիշտ շարահյուսություն, ժամանակաձևերի ճիշտ գործածում, ուղղագրության անվրեպ գործածություն)	0.3/0.2 միավոր
4. Բառապաշար (համապատասխան լեզվական ոճի ճշգրիտ կիրառում, ծավալուն բառապաշար)	0.3/0.2 միավոր
5. Գրության համար պահանջվող նիշերի նվազագույն քանակը՝ 120 բառ	0.3/0.2 միավոր
Ընդհանուր՝ յուրաքանչյուր գրության համար	1.5/1 միավոր

Յուրաքանչյուր կիսամյակում 2 գրություն է նախատեսվում, ուստի կուտակային նիշը կարող է կազմել առավելագույնը 3/2 միավոր:

Լեզուների գնահատման բաղադրիչային–կուտակային համակարգի վերջին բաղադրիչը՝ թեստը, ընդգրկում է 4 տիպի առաջադրանք՝


1. ճիշտ է / սխալ է - (5 պնդում),
2. բառերի և դրանց սահմանումների համապատասխանեցում - (10 բառ՝ 12 միավոր ակտիվության դեպքում, 5 բառ՝ 8 միավոր ակտիվության դեպքում),
3. համապատասխան բառի տեղադրում նախադասություններում - (10 բառ՝ 12 միավոր ակտիվության դեպքում, 5 բառ՝ 8 միավոր ակտիվության դեպքում),
4. ճիշտ նախդիրների տեղադրում նախադասություններում - (5 նախադասություն):

12 միավոր ակտիվության դեպքում թեստի ընդհանուր գնահատականը կազմում է 3 միավոր, իսկ 8 միավոր ակտիվության դեպքում՝ 2 միավոր:

Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային համակարգը գործարկելուց 3 ամիս անց վերջինիս արդյունավետության մասին արձագանքներ ստանալու նպատակով անց է կացվել հարցում ՀՊՏՀ ուսանողների և դասավանդող կազմի շրջանում:

Դասախոսների համար նախատեսված հարցադրումներն իրենց պատասխաններով ամփոփված են հաջորդիվ.

1. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային համակարգի ներդրմամբ ուսանողների շրջանում մեծացել է տվյալ առարկայի տեսակարար կշիռը:



Գծապատկեր 1. ***Դասախոսների հարցման արդյունքներ***


2. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային համակարգի ներդրմամբ բարձրացել է ուսանողների՝ տվյալ դասընթացների յուրացման շահամիտման աստիճանը:

3. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային համակարգի ներդրման հետ մեկտեղ խթանվել են ամբիոնի կողմից առաջարկվող դասընթացների առարկայական ծրագրերի և դասավանդման մեթոդների ձևափոխման ու բարելավման գործընթացները:

4. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային համակարգի ներդրմամբ ավելի հստակ են դարձել տվյալ դաս-

ընթացի բովանդակությունը և վերջնարդյունքները, այսինքն՝ ինչ գիտի ուսանողը, ինչ պետք է սովորեցնել նրան:

5. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային գործող համակարգը թույլ է տալիս առավել օբյեկտիվորեն գնահատել ուսանողի գիտելիքը:



Գծապատկեր 2. ***Դասախոսների հարցման արդյունքներ***

6. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային գործող համակարգը թույլ է տալիս ուսանողի մեջ ձևավորել պատասխանատվություն՝ տվյալ առարկայի յուրացման առումով:

7. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային գործող համակարգը ուսանողին դարձնում է ավելի մրցունակ:

Վերոնշյալ հարցադրումներին տրվող պատասխաններով դասախոսական կազմի 93,9 տոկոսը հավանություն է տվել համակարգի ներդրման գաղափարին. համակարգն ավելի մոտիվացված, մրցունակ և պատասխանատու է դարձնում ուսանողին՝ միևնույն ժամանակ հնարավորություն ընձեռելով դասախոսին առավել օբյեկտիվ լինելու ուսանողին գնահատելիս: Համակարգը զարկ է տվել նաև ամբիոնի կողմից առաջարկվող դասընթացների վերանայման, լրամշակման, վերջիններում առկա բաղադրիչների ձևափոխման գործընթացներին:

8. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային գործող համակարգը լավ է աշխատում լեզուների միջին մակարդակի իմացություն ունեցող ուսանողների հետ:

9. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային գործող համակարգը լավ է աշխատում նաև լեզուների ցածր մակարդակի իմացություն ունեցող ուսանողների պարագայում:

Թեև 31 դասախոս (93.9 տոկոսը) կարծում է, որ գնահատման գործող համակարգը կիրառելի է միջին մակարդակի իմացություն ունեցող ուսանողների համար, այնուամենայնիվ, 20 դասախոս համարում է, որ այս համակարգը լավ է աշխատում նաև լեզուների ցածր մակարդակի իմացություն ունեցող ուսանողների դեպքում: 13 դասախոս դժվարանում է պատասխանել կամ էլ դեմ է այս գաղափարին: Քննարկումների արդյունքում որոշվեց անհատական մոտեցում ցուցաբերել նման ուսանողների նկատմամբ՝ հնարավորություն տալով վերջիններիս ներկայացնելու միայն գրավոր աշխատանք, ընդ որում՝ գրավոր հանձնարարությունների ընտրությունը թողնելով դասախոսի հայեցողությանը: Այսպիսով՝ լեզվի ցածր մակարդակի իմացություն

ունեցող ուսանողին կընձեռվի հնարավորություն՝ մասամբ կուտակելու միավորներ:

10. Կիսամյակի ընթացքում ուսանողների կողմից բոլոր բաղադրիչները կուտակելուց հետո արդյո՞ք լավ գաղափար է լրացուցիչ պատասխաններ ունենալու դեպքում այդ ուսանողներին տալ գնահատականներ, որոնք հաշվի կառնվեն ստուգարքի կամ քննության ժամանակ:

Դասախոսների 78.8 տոկոսը (26 դասախոս) կարծում է, որ վերոնշյալ գաղափարը ընդունելի է, քանի որ առկա են ակտիվ, օտար լեզվի լավ իմացությամբ ուսանողներ, որոնք կիսամյակի ընթացքում ունենում են նախատեսված հանձնարարություններից ավելի պատասխաններ, և դասախոսները, գրանցելով այդ գնահատականները, կարողանում են բոնուսային կարգով պարգևատրել տվյալ ուսանողին ստուգարքի կամ քննության ժամանակ:

11. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային գործող համակարգը բարելավելու նպատակով ի՞նչ առաջարկություններ ունեք:

Դասախոսների հարցման արդյունքում գրանցվել են հետևյալ առաջարկները.

ա) Հաշվի առնել յուրաքանչյուր լեզվի դասավանդման ընթացքում առաջ եկած և՛ խոչընդոտները, և՛ դրական կողմերը: Օրինակ՝ հնարավորություն տալ, որ ցանկության դեպքում շնորհանդեսը կարողանան ներկայացնել նաև խմբով՝ ընտրելով մեծ թեմա, պահպանելով ժամանակի տևողությունը և սլայդի քանակը ամեն ուսանողի համար:


բ) Բարձրացնել տնային աշխատանքների համար գնահատման նիշերը, շնորհանդեսը ներկայացնել երկու ուսանողով:

գ) Մեծացնել ամենօրյա պատասխանների գնահատման տեսակարար կշիռը՝ իջեցնելով գրավորինը (6 պատասխան՝ 0,5 միավորով, քանի որ կան ուսանողներ, որոնք ցանկություն ունեն լրացուցիչ պատասխանելու):

դ) Ունենալ հստակ ժամանակացույց որոշակի առաջադրանքների համար:


Ուսանողների համար նախատեսված հարցադրումները հետևյալն էին.

1. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային համակարգի ներդրման հետ մեկտեղ ավելի մեծ պատասխանատվությամբ եմ վերաբերվում տվյալ առարկաներին:



Գծապատկեր 3. ***Ուսանողների հարցման արդյունքներ***

2. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային համակարգի ներդրման արդյունքում հնարավորություն ունեմ նպատակաուղղված կերպով կատարելագործելու որոշակի լեզվական հմտություններ (շնորհանդես, նամակագրություն):



Գծապատկեր 4. ***Ուսանողների հարցման արդյունքներ***

Հարցվածների 49.6 տոկոսը (283 ուսանող) խորապես համոզված է, որ համակարգը բարձրացրել է պատասխանատվության զգացումը, և ուսանողները հստակ պատկերացնում են՝ լեզվական ինչ հմտություններ են զարգանում դասընթացի որոշակի փուլում (348 ուսանող):

3. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային համակարգի ներդրմամբ նվազել է տվյալ առարկաների ստուգարքին կամ քննությանը գերազանց ստանալու հնարավորությունը:

4. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային գործող համակարգում բաղադրիչները խելամիտ կերպով են բաշխված, ինչը համապատասխանում է դասընթացի բովանդակությանը:

5. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային համակարգի ներդրման արդյունքում ինքնուրույն աշխատանք ավելի շատ է կատարվում:

Ուսանողների 61.2 տոկոսը (349 հոգի) նշում է, որ համակարգի ներդրմամբ գերազանց գնահատական ստանալը բարդացել է, 13.7 տոկոսը դժվարանում է պատասխանել, իսկ 143 ուսանող կողմ չէ այս գաղափարին: Բաղադրիչների խելամիտ բաշխվածությանը, ինչպես նաև ավելի շատ ինքնուրույն աշխատանք կատարելու վերաբերյալ հարցադրումներին համաձայնել է հարցվածների կեսից ավելին (52.6 տոկոս/300 հոգի):

6. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային գործող համակարգն ավելի մրցունակ է դարձնում:

7. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային համակարգի ներդրման շնորհիվ ավելի հստակ ես պատկերացնում տվյալ դասընթացի բովանդակությունը և վերջնարդյունքները, այսինքն՝ ինչ գիտես և ինչ կսովորես այս դասընթացից:

323 ուսանող չի համարում, որ տվյալ համակարգը նպաստում է մրցունակ դառնալուն, մինչդեռ 40 տոկոսից ավելին դրական է արձագանքել: 289 ուսանող լավ չի պատկերացնում դասընթացների վերջնարդյունքները, 204

ուսանողի համար գնահատման համակարգը, թերևս, նպաստել է վերջնարդյունքների ավելի լավ պատկերացմանը:

8. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային գործող համակարգը թույլ է տալիս առավել օբյեկտիվորեն գնահատել ուսանողի գիտելիքը:

9. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային համակարգի ներդրումը ՀՊՏՀ-ում լավ գաղափար է:

Հարցվածների կեսից ավելին (54.4 տոկոսը) կարծում է, որ գնահատման բաղադրիչային-կուտակային համակարգի ներդրումը ՀՊՏՀ-ում հաջողված գաղափար է, ինչը թույլ է տալիս դասախոսին առավել օբյեկտիվորեն գնահատել ուսանողին:

10. Կիսամյակի ընթացքում բոլոր բաղադրիչները կուտակելուց հետո արդյոք կցանկանայիք լրացուցիչ պատասխաններ ունենալու դեպքում գրանցել գնահատականներ, որոնք հաշվի կառնվեն ստուգարքի կամ քննության ընթացքում:

450 ուսանող (78.9 տոկոսը) ողջունում է այս գաղափարը, մինչդեռ 65-ը (11.4 տոկոսը) դեմ են այս մոտեցմանը, ևս 55 հարցված (9.6 տոկոսը) դժվարանում է պատասխանել:

11. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային գործող համակարգի բարելավման ի՞նչ առաջարկություններ ունեք:

Ուսանողների հարցման արդյունքում գրանցվել են առաջարկներ, որոնց քննարկմանն անդրադառնում ենք հաջորդիվ:

ա) Կցանկանայի, որ այս համակարգը գործեր նաև մյուս (հատկապես մասնագիտական) առարկաների պարագայում:

բ) Առաջարկում եմ որոշ առաջադրանքներ կատարել խմբային, քանի որ բարելավվում է աշխատանքի որակը, և ուսանողն ավելի մեծ հաճույքով է անում առաջադրանքը:

Հարկ է նշել, որ խմբային առաջադրանքների դեպքում գնահատման օբյեկտիվության գործոնը նվազում է, քանի որ, օրինակ, շնորհանդեսների տարբերակով հարցման դեպքում դասախոսը չի կարող ճշգրիտ իմանալ յուրաքանչյուր ուսանողի կատարած աշխատանքի չափը և բովանդակությունը:

գ) Համակարգը, ընդհանուր առմամբ, արդյունավետ է: Բայց կցանկանայի փոփոխություն լիներ տեսական նյութը պատմելու գնահատման մեջ, որպեսզի ուսանողին հնարավորություն տրվի լրացուցիչ գնահատականներ վաստակելու, քանի որ 5 դաս պատասխանելուց հետո հաջորդ պատասխաններն այլևս չեն գնահատվում: Ցանկալի է, որ Ուսանողների ակտիվ լինելու և լրացուցիչ պատասխանների դեպքում տրվեն լրացուցիչ միավորներ:

Վերոնշյալ առաջարկը հնչել է նաև դասախոսների հարցումն իրականացնելիս, և քննարկման արդյունքում որոշվել է ուսանողին հնարավորություն ընձեռել կուտակելու լրացուցիչ միավորներ, որոնք հաշվի կառնվեն ստուգարքի կամ քննության ժամանակ:

դ) Շնորհանդեսների համար տրամադրել թեմաների հստակ ցանկ, որպեսզի ավելի հեշտ կողմնորոշվենք ընտրության հարցում:

Շնորհանդեսների թեմաների ընդհանուր ուրվագիծը (գործարար ոլորտին վերաբերող իրողություններ, հայտնի, հաջողությունների հասած անհատներ, ստարտափներ, հայտնի ընկերություններ և այլն) տրվում է ուսանողներին կիսամյակի սկզբում: Բացի այդ, ուսանողները կարող են առաջնորդվել դասերում առկա թեմատիկայով (օրինակ՝ գործարար ոլորտի մշակութային տարբերություններ, գործարար վարվելակերպ և այլն): Ավելին՝ դասընթացի ավարտական/ամփոփիչ կիսամյակում ուսանողներից պահանջվում է «փիչինգ անել» իրենց բիզնես գաղափարները:

ե) Կարծում եմ՝ նպատակահարմար է ուսանողին տալ հնարավորություն ուղղելու ստացած ցածր միավորը: Չէ՞ որ կան որոշակի գործոններ, որոնց վրա ստացած միավորը ունի որոշակի ազդեցություն:

Վերոնշյալ առաջարկը գործարկվել է փորձաշրջանի ընթացքում. որոշ ուսանողներ կիսամյակի սկզբում բավարար կերպով չէին ներկայացրել շնորհանդեսը. ստացել էին 1 միավոր՝ 2-ի փոխարեն: Վերջիններիս ցանկությամբ կիսամյակի վերջում տրվեց հնարավորություն՝ վերստին կազմակերպելու շնորհանդես՝ այլ թեմայով: Այդկերպ շատ ուսանողների հաջողվեց բարձրացնել իրենց գնահատականը:

Հարցման արդյունքների հիման վրա կատարվել է նաև ՍՎՈՒԹ վերլուծություն, որը ներկայացված է ստորև.

Աղյուսակ 4

ՀՊՏՀ լեզուների գնահատման համակարգի ՍՎՈՒԹ վերլուծության արդյունքներ[11]

Ուժեղ կողմեր	***Թույլ կողմեր***
• Դասախոսը հստակ պատկերացնում է աշխատանքի հաջորդականությունը (առկա է գիտելիքի ստուգման հստակ ժամանակացույց): • Ուսանողի կարգապահության և կազմակերպվածության մակարդակը բարձրանում է (ուսանողը հստակ պատկերացնում է՝ երբ և ինչպես պետք է կուտակի իր միավորները. արդյունքում՝ ապահովվում է հաճախելիության բարձր մակարդակ և ակտիվ ներգրավվածություն դասին): • Ուսանողի անաչառ գնահատման գործընթացը լավարկվում է (այլևս անհնար է ձևավորել ակտիվություն մեկ գնահատականի հիման վրա, անհրաժեշտ է տարբեր բաղադրիչներով կուտակել վերջնական միավորը): • Առողջ մրցակցային մթնոլորտ է ձևավորվում (ուսանողը ավելի շահագրգռված է ակտիվ մասնակցել դասին, ինչը կապահովի բարձր գնահատական):	• Առկա չէ հստակ ժամանակացույց որոշակի հանձնարարությունների համար: • Տեխնիկապես հագեցած լսարանների քանակը բավարար չէ: • Լեզուների իմացության ցածր մակարդակ ունեցող ուսանողների համար որոշ հանձնարարություններ հաղթահարելի չեն:

[11] Աղյուսակը մշակել են հեղինակները:

Հնարավորություններ	***Սպառնալիքներ***
• Տվյալ համակարգը կարող է կիրառվել ՀՊՏՀ այլ ամբիոնների կողմից: • Լրացուցիչ միավորները կարելի է ընդգրկել ստուգարքի կամ քննության միավորների մեջ: • Տվյալ համակարգի ճկունության շնորհիվ կա շտկումների և լրամշակումների հնարավորություն (բաղադրիչների բովանդակության, քանակի և տեսակարար կշռի փոփոխություն): • Առկա է միևնույն բաղադրիչից արդեն իսկ կուտակած միավորները / գնահատականը բարձրացնելու հնարավորություն:	• Արտակարգ իրավիճակների (համավարակ, պատերազմ) դեպքում կարող է առաջ գալ որոշ առաջադրանքների գնահատման դժվարություն:

Եզրակացություններ: Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ գնահատման գործոնը կարևորագույն տեղ է զբաղեցնում հատկապես լեզուների դասավանդման գործընթացում, քանի որ լեզուների իմացությունը ինքնին ներառում է որոշակի գիտելիքի, հմտությունների և կարողությունների (կարդալ, լսել, խոսել, գրել) տիրապետում, ինչը մեզ թույլ տվեց դրանք, որպես բաղադրիչներ, շահավետ բաշխել գնահատման գործող համակարգում: Փորձաշրջանի գործարկման, դասախոսների և ուսանողների շրջանում անցկացված հարցման, ֆոկուս քննարկումների և ՍՎՈՒԹ վերլուծության արդյունքում լեզուների իմացության գնահատման բաղադրիչային-կուտակային համակարգում առաջարկվում է կատարել հետևյալ լրամշակումները և փոփոխությունները.

- Շնորհանդեսի գնահատման «Ներկայացումը ստեղծագործական է և տեսանելիորեն գրավիչ» (առնվազն տասը նկար) չափանիշում «ստեղծագործական» բառը շնորհանդեսը գնահատելու շրջանակներում մեկնաբանել որպես հետաքրքիր, օրինակ՝ հարցերով, նկարների օգնությամբ ուղղորդող սկիզբ (lead-in) ունեցող ելույթն ավելի բարձր գնահատելու հիմք, քան թեման սովորական կերպով ներկայացնելու պարագայում է:
- Պրեզենտացիայի գնահատման «Ներկայացումը հետաքրքիր է լսարանի համար» չափանիշը քննարկելիս հիմնվել շնորհանդեսի վերջում թեմայի վերաբերյալ համակուրսեցիների հնչեցրած հարցերի քանակի և բովանդակության վրա:
- Յուրաքանչյուր բաղադրիչի հարցման համար տրամադրել որոշակի ժամանակահատված՝ որոշակի օրեր: Այդ դասերից բացակայելու դեպքում ուսանողը այլևս իրավունք չի ունենա լրացնելու իր բացթողումները, եթե չներկայացնի բժշկի կողմից տրված տեղեկանք: Հարգելի պատճառով բացակայող ուսանողներին կիսամյակի վերջում տրամադրվում է պարտքերի մարման մեկ օր, որի ժամանակ ուսանողները հնարավորություն կունենան կուտակելու իրենց բաց թողած միավորները:
- Եթե ուսանողը կիսամյակի ընթացքում ոչ միայն կուտակում է անհրաժեշտ միավորներն ամբողջությամբ, այլ նաև ունենում է լրացուցիչ պատասխաններ, ապա այդ լրացուցիչ միավորներն ընդգրկվում են ստուգարքի կամ քննության միավորների մեջ:

- Եթե ուսանողը կիսամյակի ընթացքում որոշ բաղադրիչներից կուտակել է ցածր գնահատական, սակայն ցանկություն ունի շտկելու իրավիճակը, ապա հնարավորություն տալ նրան դա անելու: Այսինքն՝ ուսանողի լավ պատասխանի դեպքում չեղյալ համարել նախկին գնահատականը և նշանակել նորը:

Օգտագործված գրականություն

1. Black Paul, Wiliam Dyllan, Assessment and Classroom Learning, Assessment in Education: Principles, Policy & Practice, 1998. URL: https://www.tandfonline.com/doi/abs/10.1080/0969595980050102
2. Fisher Michael R. Jr., Student Assessment in Teaching and Learning. URL: https://cft.vanderbilt.edu/student-assessment-in-teaching-and-learning/
3. Maki Peggy L., Developing an Assessment Plan to Learn about Student Learning. The Journal of Academic Librarianship, 28.1, 2002. ScienceDirect. Web. The Journal of Academic Librarianship.
4. Ахмедханова С. М., Рейтинг как одна из технологий объективной оценки личностных достижений учащихся // Молодой ученый, № 12 (59), 2013, URL: https://moluch.ru/archive/59/8335/
5. Клепикова Е.И., Система оценивания учащихся // Образовательная социальная сеть nsportal.ru URL https://nsportal.ru/shkola/materialy-metodicheskikh-obedinenii/library/2014/02/12/sistema-otsenivaniya-uchashchikhsya
6. Майков Е.В., Накопительная система оценки успеваемости студентов // Вестн. Моск. ун-та., сер. 20, Педагогическое образование, №2, 2008. URL: https://cyberleninka.ru/article/n/nakopitelnaya-sistema-otsenki-uspevaemosti-studentov/
7. Малышева Т. В., Практика внедрения балльно-рейтинговой системы оценивания результатов обучения студентов ссуза // Актуальные вопросы современной педагогики: материалы IV Междунар. науч. конф. (г. Уфа, ноябрь, 2013 г.). URL: https://moluch.ru/conf/ped/archive/97/4425/
8. Сазонов Б. А., Балльно-рейтинговые системы оценивания знаний и обеспечение качества учебного процесса // Высшее образование в России, №6, 2012. URL: https://cyberleninka.ru/article/n/ballno-reytingovye-sistemy-otsenivaniya-znaniy-i-obespechenie-kachestva-uchebnogo-protsessa
9. Чепурная М.Н., Рейтинговая система оценивания результатов обучения как средство повышения качественного профессионального образования // Инновационная наука, №10-1, 2021, URL: https://cyberleninka.ru/article/n/reytingovaya-sistema-otsenivaniya-rezultatov-obucheniya-kak-sredstvo-povysheniya-kachestva-professionalnogo-obrazovaniya
10. Шилова Н.С., Традиционная и инновационная система оценивания учащихся // Образовательная социальная сеть nsportal.ru URL: https://nsportal.ru/shkola/obshchepedagogicheskie-tekhnologii/library/2012/09/23/traditsionnaya-i-innovatsionnaya

ЛУСИНЕ АРУТЮНЯН
Заведующая кафедрой языков АГЭУ,
доктор филологических наук, профессор

РУЗАННА САРКИСЯН
Доцент кафедры языков АГЭУ,
кандидат педагогических наук

АЛЛА МКРТЧЯН
Доцент кафедры языков АГЭУ,
кандидат педагогических наук

ЛИЛИТ АКОБЯН
Ассистент кафедры языков АГЭУ

Экспериментальное обучение: внедрение компонентно-накопительной системы оценивания владения языками на примере АГЭУ.– Результат каждого курса предполагает усвоение обучающимся содержания и достижение конечных результатов данного курса. Выбор форм и подходов оценивания конечных результатов всегда был в центре внимания исследователей на всех этапах истории развития методики обучения. В данной статье рассматривается проблема оценивания в ходе обучения языкам. В рамках экспериментального обучения кафедра языков АГЭУ со второго семестра 2021-2022 уч.г. инициировала внедрение компонентно-накопительной системы в процесс обучения языкам. Опираясь на результаты апробации, а также опросы среди преподавателей и студентов, обсуждения в фокус-группах и SWOT-анализ, авторы предлагают ввести некоторые доработки и модификации с целью улучшения и повышения эффективности данной системы.

Ключевые слова: *знание языков, преподавание языков, система оценивания знания языков, экспериментальное обучение*
JEL: D83, I21, I23
DOI: 10.52174/1829-0280_2022.4-156

LUSINE HARUTYUNYAN
Head of the Chair of Languages of ASUE,
Doctor of Philology, Professor

RUZANNA SARGSYAN
Associate Professor of the Chair of Languages of ASUE,
PhD in Pedagogy

ALLA MKRTCHYAN
Associate Professor of the Chair of Languages of ASUE,
PhD in Pedagogy

LILIT HAKOBYAN
Assistant of the Chair of Languages of ASUE

Experimental Teaching: Introduction of the Componential-Cumulative Assessment System of Language Competence (based on the example of ASUE).– The result of every course implies aquisition of course contents or learning outcomes by the learner/student. The choice of types and approaches of assessment of the aquisition level of learning outcomes have been a thorny issue throughout all the stages of the history of teaching methodology. The paper addresses the problem of language competence assessment. During the second semester of the 2021-2022 academic year, within the framework of experimental teaching, the ASUE Chair of Languages initiated the implementation of a new componential-cumulative assessment system for language courses. Based on the results of the approbation of the system, the survey conducted among teachers and students, as well as focus group discussions and SWOT analysis, the authors make several suggestions and adaptations to make the system more applicable and effective.

Keywords: *language competence, language teaching, assessment system of language competence, experimental teaching*
JEL: D83, I21, I23
DOI: 10.52174/1829-0280_2022.4-156



ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՍԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՊՏՀ լեզուների ամբիոնի վարիչ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
https://orcid.org/0000-0002-3499-4862

ՌՈՒԶԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՊՏՀ լեզուների ամբիոնի դոցենտ,
մանկավարժական գիտությունների թեկնածու
https://orcid.org/0000-0003-1996-3483

ԱԼԼԱ ՄԿՐՏՉՅԱՆ
ՀՊՏՀ լեզուների ամբիոնի դոցենտ,
մանկավարժական գիտությունների թեկնածու
https://orcid.org/0000-0001-7855-0756

ԼԻԼԻԹ ՀԱԿՈԲՅԱՆ
ՀՊՏՀ լեզուների ամբիոնի ասիստենտ
https://orcid.org/0000-0001-8459-6718

ԷՔՍՊԵՐԻՄԵՆՏԱԼ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ. ԼԵԶՈՒՆԵՐԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԱՅԻՆ-ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀՊՏՀ ՕՐԻՆԱԿՈՎ

Գնահատումը ժամանակակից գործիք է՝ վերափոխելու ապագայի կրթությունը:

Քերոլ Էնն Թոմլինսոն

Յուրաքանչյուր դասընթացի արդյունք ենթադրում է սովորողի կողմից փվյալ դասընթացի բովանդակության կամ վերջնարդյունքների յուրացում: Վերջնարդյունքների յուրացման աստիճանի գնահատման ձևերի և մոտեցումների ընտրությունը խնդրո առարկա է եղել դասավանդման մեթոդաբանության պատմության բոլոր փուլերում: Տվյալ հոդվածը անդրադառնում է լեզուների իմացության գնահատման հիմ-

նախնդրին: Էքսպերիմենտալ դասավանդման շրջանակներում 2021–2022 թթ. ուստարվա երկրորդ կիսամյակից ՀՊՏՀ լեզուների ամբիոնը նախաձեռնել է գնահատման բաղադրիչային-կուտակային համակարգի կիրառումը լեզուների դասավանդման գործընթացում: Հիմնվելով փվյալ համակարգի փորձաշրջանի գործարկման, դասախոսների և ուսանողների շրջանում անցկացված հարցման, ֆոկուս քննարկումների և ՍՎՈՒԹ (SWOT) վերլուծության արդյունքների վրա՝ հեղինակներն առաջարկում են իրականացնել որոշակի լրամշակումներ և փոփոխություններ՝ համակարգն ավելի կիրառելի և արդյունավետ դարձնելու նպատակով:

Հիմնաբառեր. *լեզուների իմացություն, լեզուների դասավանդում, լեզուների իմացության գնահատման համակարգ, էքսպերիմենտալ դասավանդում*

JEL: D83, I21, I23
DOI: 10.52174/1829-0280_2022.4-156

Ներածություն: Հայտնի է, որ յուրաքանչյուր դասընթացում գնահատման գործոնը հանդես է գալիս որպես խթան ուսանողների համար և մեծապես նպաստում է դասավանդման գործընթացի հաջող իրականացմանը: Լեզուների իմացության մակարդակի գնահատման խնդիրները արդիական են եղել լեզուների դասավանդման բոլոր մեթոդները կիրառելիս, քանի որ գիտելիքի գնահատումն ապահովում է ուսանողների կարիքների վերհանում, նրանց առաջընթացի ճշգրիտ գրանցում և հնարավորություն է տալիս դասախոսին կողմնորոշվելու՝ արդյոք տվյալ դասընթացը ճիշտ է կազմված, թե անհրաժեշտ են որոշակի շտկումներ:

Գոյություն ունեն լեզուների իմացության մակարդակի գնահատման բազմաթիվ եղանակներ, որոնք տարբերվում են իրենց նպատակներով՝ ըստ բաղադրիչների, հաղորդակցական տարբեր հմտությունների, տվյալ դասընթացում առաջընթացի գրանցման, լեզվի իմացության մակարդակի սահմանման և այլն: ՀՊՏՀ-ում լեզուների դասընթացների, մասնավորապես՝ *«Ռուսաց լեզու», «Մասնագիտական օտար լեզու – 1,2,3,4» և «Հայոց լեզու և գրականություն»* առարկայական ծրագրերը ցուցանշում են հստակ վերջնարդյունքներ, որոնց ուսանողը պետք է տիրապետի դասընթացի ավարտից հետո: Դրանք հետևյալն են՝

- զարգացնել և ամրապնդել ուսանողի՝ մայրենի, օտար, ռուսերեն լեզուներով գործարար բանավոր և գրավոր հաղորդակցման հմտությունները,
- հարստացնել ուսանողի՝ մայրենի, օտար, ռուսերեն լեզուներով մասնագիտական բառապաշարը համապատասխան մասնագիտական տերմիններով,
- զարգացնել ուսանողի՝ որոշակի մասնագիտական իրադրություններում լեզվական ունակությունները կիրառելու հմտությունները,
- հատուկ ուշադրություն դարձնել ուսանողի խոսակցական լեզվի զարգացմանը՝ հաշվի առնելով գործարարական վարվելակերպը,
- ուսանողին փոխանցել մայրենի, օտար, ռուսերեն լեզուներով պաշտոնական նամակներ և գրություն կազմելու հմտություններ:

Վերոնշյալ վերջնարդյունքներն ապահովելու համար ՀՊՏՀ լեզուների ամբիոնը վերջին շրջանում նախաձեռնել է էքսպերիմենտալ մի շարք գործըն-

թացներ, որոնցից է գնահատման բաղադրիչային-կուտակային համակարգի ներդրումը լեզուների դասավանդման գործընթացում:

Գրականության ակնարկ: Հասարակական կյանքում տեղի ունեցող առանցքային փոփոխությունների շարքում ուսուցման գործընթացի կատարելագործման խնդիրը առանձնահատուկ կարևորություն է ստանում, և այդ փոփոխությունների արդյունքում ուսուցման բոլոր մակարդակներում փոխվում են նաև դասավանդողի գործունեության բովանդակությունն ու մեթոդները:

Մանկավարժական վերահսկողությունը (գնահատումը) ուսուցման արդյունավետության կարևորագույն գործոններից մեկն է, քանի որ իրականացնում է դիդակտիկ գործընթացի զարգացման օրինաչափությունները:

Ինչպե՞ս գնահատել ուսանողի ձեռքբերումների մակարդակը, ի՞նչ կարելի է գնահատել. սրանք մանկավարժության «հավերժական» հարցերից են: Կրթական համակարգի զարգացման բոլոր փուլերում ժողովրդավարական սկզբունքների ամրապնդմամբ նախ առաջադրվում է գնահատման գործառույթի իրականացման արդյունավետ ուղիներ գտնելու հարցը:

Գիտական գրականության մեջ առանձնացնում են գնահատման իրար հակադիր երկու համակարգ՝ ամփոփիչ գնահատում (summative assessment) և ձևավորող գնահատում (formative assessment): Ամփոփիչ գնահատումը կատարվում է դասընթացի ավարտին: Գնահատման այդ եղանակի հիմնական նպատակը սովորողների գիտելիքների ստուգումն է: Ձևավորող գնահատումն իրականացվում է ողջ դասընթացի ընթացքում: Գնահատման այս եղանակի հիմնական նպատակն է ստուգել սովորողների առաջընթացը՝ հետագայում ուսումնական գործընթացը բարելավելու և էլ ավելի արդյունավետ կազմակերպելու համար[1]: Ձևավորող գնահատման համակարգի արդյունավետության մասին առաջինը խոսել են Փոլ Բլեքը և Դիլան Ուիլյամը[2]:

Ամփոփիչ գնահատման դասական օրինակ է ամփոփիչ ստուգարքը կամ քննությունը: Սովորողների գիտելիքները ստուգարքի կամ քննության «մեկանգամյա» պատասխանով գնահատելու ավանդական համակարգը վաղուց արդեն սպառել է իրեն: Մասնագիտական գրականության մեջ գնահատման ավանդական համակարգի թերությունների մասին բազմիցս նշվել է: Հիմնական թերությունները վերաբերում են մանկավարժական սուբյեկտիվիզմին, գնահատման չափանիշների անբավարար զարգացմանը, թույլ դիֆերենցիալ ունակությանը և այլն:

Վարկանշային համակարգը ձևավորող գնահատման համակարգի տարբերակներից մեկն է: Ուսումնական գործընթացում նշված համակարգի կիրառումը սովորողներին թույլ է տալիս հասկանալ իրենց ուժեղ ու թույլ կողմերը և մտածել արդյունքները բարելավելուն ուղղված անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու մասին[3]:

---

[1] Տե՛ս **Fisher Michael R. Jr.,** Student Assessment in Teaching and Learning URL https://cft.vanderbilt.edu/student-assessment-in-teaching-and-learning

[2] Տե՛ս **Black Paul** & **Wiliam Dyllan,** Assessment and Classroom Learning, Assessment in Education: Principles, Policy & Practice, 1998. URL: https://www.tandfonline.com/doi/abs/10.1080/0969595980050102

[3] Տե՛ս **Maki Peggy L.,** Developing an Assessment Plan to Learn about Student Learning. The Journal of Academic Librarianship 28.1, 2002, էջ 8–13: ScienceDirect. Web. The Journal of Academic Librarianship, էջ 11:

Մինչ նոր՝ վարկանշային գնահատման համակարգին անցումը կրթական հաստատությունները որոնում էին «հին» համակարգը տարբեր միջոցներով բարելավելու ուղիներ, որոնց շարքում կարելի է առանձնացնել հետևյալը[4]՝

- գնահատականի նշանակում «+» կամ «–» նշաններով,
- թվային, միավորային համակարգի լրացում/համալրում «բառային» տարբերակով,
- գնահատականի նշանակում մեկնաբանություններով՝ ուղղված սովորողներին և/կամ նրանց ծնողներին (դպրոցի աշակերտներին գնահատելիս),
- առաջընթացն արձանագրող էկրանների կիրառում,
- հենց իր հետ մրցակցության կազմակերպում և այլն:

Գնահատման վերոնշյալ բոլոր մեթոդներն ունեն և՛ առավելություններ, և՛ թերություններ:

Որպես կրթական համակարգի նորարարական գործիքներ՝ այսօր լայնորեն կիրառվում են թեստավորումը, գնահատման մոդուլային և վարկանշային համակարգերը, գիտելիքների որակի գնահատումը, մշտադիտարկումը և ուսումնական թղթապանակը (պորտֆոլիոն):

Աշխարհի առաջատար կրթական հաստատությունները (մասնավորապես՝ բարձրագույն ուսումնական հաստատությունները) ավանդականից վաղուց տեղափոխվել են գնահատման միավորային-վարկանշային, կուտակային համակարգ: «Սովորողների գնահատման արտասահմանյան համակարգերը, դրանց գործուն կայացումը և զարգացումը քսաներորդ դարի երկրորդ կեսին ձևավորվել են հիմնականում որպես կուտակային»[5]: Վերջին տարիներին գնահատման միավորային-վարկանշային համակարգերը ակտիվորեն մշակվում, կիրառվում ու կատարելագործվում են ինչպես ռուսաստանյան (սկսած 2010 թ.), այնպես էլ հայաստանյան բուհերում:

Սովորողների գիտելիքների մշտադիտարկման վարկանշային համակարգի ներդրումը պայմանավորված է կրթական գործունեությունը խթանելու և սովորողների ճանաչողական ակտիվությունը մեծացնելու անհրաժեշտությամբ՝ գնահատական ստանալու հնարավորության միջոցով: Այսօր անհրաժեշտ է ստեղծել նպաստավոր պայմաններ կրթական փոխգործակցության բոլոր մասնակիցների անհատական ներուժի դրսևորման և խթանման համար: Դա շատ ավելի դյուրին կդառնա գիտելիքների գնահատման վարկանշային համակարգով, որը կարելի է համարել սահմանված առաջադրանքների կատարման հնարավոր եղանակներից մեկը:

Սովորողների գիտելիքների և հմտությունների մշտադիտարկման վարկանշային համակարգի ներդրումը առանձնահատուկ արդիականություն ստացավ COVID-19 համավարակի և, դրանով պայմանավորված, կրթական

---

[4] Տե՛ս **Шилова Н.С.,** Традиционная и инновационная система оценивания учащихся // Образовательная социальная сеть nsportal.ru URL: https://nsportal.ru/shkola/obshchepedagogicheskie-tekhnologii/library/2012/09/23/traditsionnaya-i-innovatsionnaya

[5] **Сазонов Б. А.**, Балльно-рейтинговые системы оценивания знаний и обеспечение качества учебного процесса // Высшее образование в России, №6, 2012. URL: https://cyberleninka.ru/article/n/ballno-reytingovye-sistemy-otsenivaniya-znaniy-i-obespechenie-kachestva-uchebnogo-protsessa

հաստատությունների մեծ մասի ուսուցումը հեռավար ձևաչափով կազմակերպելու հարցում, երբ դասավանդողները դժվարությունների էին բախվում սովորողներին առցանց գնահատելու գործընթացում:

Հարկ է նշել, որ գնահատման «վարկանշային համակարգ» եզրույթի հետ մեկտեղ օգտագործվում է ևս մեկը՝ սովորողների ձեռքբերումների գնահատման *կուտակային համակարգը*: Չնայած այն հանգամանքին, որ երկու տերմիններն էլ հաճախ գործածվում են որպես հոմանիշներ, այնուամենայնիվ, կան հեղինակներ, որոնք վստահեցնում են, որ դրանք տարբերվում են իմաստային երանգներով: Այսպես՝ Է. Վ. Մայկովը «վարկանշային» կամ «միավորային-վարկանշային» համակարգ տերմինները համարում է ոչ այնքան հաջողված՝ որպես հիմնավորում նշելով այն հանգամանքը, որ «միայն քննության հիման վրա սովորողին դրված ամփոփիչ գնահատականը (անկախ կիսամյակի ընթացքում տեղի ունեցածից) նույնպես միավոր և վարկանիշ է»: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քննարկվող համակարգի հիմքում «կիսամյակի ընթացքում սովորողի միջանկյալ գնահատականների կուտակումը և վերջին դասաժամին դրանց գումարի հաշվառումն է», Մայկովը հանգում է այն եզրակացության, որ «ավելի բնական է այս համակարգն անվանել կուտակային, կումուլյատիվ»[6]:

«Վարկանիշ» բառը ծագում է անգլերեն «to rate» (գնահատել) և «rating» (գնահատում) բառերից: Այսպիսով՝ վարկանիշը «կուտակված գնահատականն» է կամ «գնահատական, որը հաշվի է առնում նախապատմությունը»:

Առավել ընդհանրական ձևաչափով սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման վարկանշային տեխնոլոգիան հիմնված է ընթացիկ աշխատանքների կամ պարբերաբար իրականացվող վերահսկողական միջոցառումների ընթացքում նրանց կուտակած գնահատականները հաշվի առնելու սկզբունքի վրա: Ի տարբերություն գնահատման ավանդական եղանակի՝ վարկանշային տեխնոլոգիան ենթադրում է որոշակի ժամանակահատվածի ընթացքում սովորողի գնահատականների պարբերական ամփոփում սահմանված կարգով:

Վերահսկման ավանդական մեթոդով գնահատման համակարգը դասավանդման առումով սխալ ուղղորդվածություն ունի. կառուցված է «հանման, նվազման» մեթոդի հիման վրա: Այլ կերպ ասած՝ սկզբնակետը որոշակի նշաձողն է (խորհրդային տարիներին՝ 5, ՀՀ ժամանակակից դպրոցական կրթության համակարգում՝ 10, ՀՀ բարձրագույն կրթության համակարգում՝ 20 կամ 100), և, կախված սովորողի կատարած բացթողումներից ու սխալներից, գնահատականը նվազում է:

Սա հնարավորություն չի տալիս գնահատման բավարար չափով բովանդակալից, իմաստալից չափանիշներ ներդնելու: Բացի այդ, գնահատումը դառնում է «պատժի» տեսակ, այլ ոչ թե սովորողի ձեռքբերման մակարդակի խրախուսման և ապացուցման միջոց: Այլընտրանքը գնահատումն է՝ «ավելացում, գումարում» մեթոդով (ամփոփում), որը հիմնված է ուսուցման նվազագույն մակարդակի վրա: Յուրաքանչյուր սովորողից պահանջվում է առանց ձախողման հասնել այս մակարդակին: Ավելի բարձր մակարդակ-

[6] **Майков Е.В.,** Накопительная система оценки успеваемости студентов // Вестн. Моск. ун-та., сер. 20, Педагогическое образование, №2, 2008. URL https://cyberleninka.ru/article/n/nakopitelnaya-sistema-otsenki-uspevaemosti-studentov/

ների գնահատման չափանիշները կազմվում են նվազագույնի հիման վրա՝ խորությամբ կամ ծավալով իմաստային մեծացման միջոցով[7]:

Գիտելիքների վերահսկման վարկանշային համակարգը՝ որպես տարբեր դասընթացների հաջող իրացման միջոց, կարող է զգալիորեն բարձրացնել ինչպես դասավանդողի, այնպես էլ հենց սովորողների գործունեության արդյունավետությունը՝ պայմանավորված հետևյալ գործոններով[8].

- դասի որոշակի թեմայի, հետևաբար նաև ամբողջ դասընթացի (կամ առարկայի) հանդեպ սովորողների առավելագույն հնարավոր հետաքրքրության խթանում,
- բոլոր սովորողների ներգրավում,
- սովորողի մտածողության ու վարքի շրջադարձ ավելի արդյունավետ և գործուն որոնողական գործունեության ուղղությամբ,
- տարբեր բնույթի աշխատանքների համար սովորողի ստացած գնահատականների նշանակության տարբերակում,
- ստացած գնահատականը բարելավելու հնարավորություն:

Կուտակային գնահատման համակարգը ներմուծելիս հետազոտողները նկատում են հետևյալ դրական կողմերը.[9]

- սովորողների կարգապահության մակարդակի բարձրացում,
- սովորողների կազմակերպվածության աստիճանի բարձրացում,
- ուսումնական գործընթացում հոգեբանական հարմարավետության զգացողության ուժեղացում,
- գնահատականի օբյեկտիվության ապահովում,
- սովորողների միջև մրցակցային տարրի սրում,
- դասավանդող անձնակազմի աշխատանքի ակտիվացում,
- դասավանդողների կողմից կրթական միջավայրի կառավարման մակարդակի բարձրացում:

Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ գնահատման այս համակարգի հիմնական առավելությունն այն է, որ «կոմպետենցիաների տիրապետման աստիճանը գնահատելու բոլոր համակարգերից վարկանշայինը թույլ է տալիս ավելի օբյեկտիվ գնահատել սովորողների գիտելիքները, հմտությունները և փորձը, խթանում է նյութերն ինքնուրույն փնտրելու ցանկությունը, ինչը հնարավորություն է տալիս զարգացնելու սովորողների հետաքրքրությունը նյութի ուսումնասիրության նկատմամբ՝ վերջիններիս պասիվ ունկնդիրների կատեգորիայից տեղափոխելով ակտիվ մասնակիցների կատեգորիա»[10]:

---

[7] Տե՛ս **Клепикова Е.И.,** Система оценивания учащихся // Образовательная социальная сеть nsportal.ru URL https://nsportal.ru/shkola/materialy-metodicheskikh-obedinenii/library/2014/02/12/sistema-otsenivaniya-uchashchikhsya

[8] Տե՛ս **Ахмедханова С. М.,** Рейтинг как одна из технологий объективной оценки личностных достижений учащихся // Молодой ученый, № 12 (59), 2013, էջ 400-402: URL: https://moluch.ru/archive/59/8335/

[9] Տե՛ս **Малышева Т. В.,** Практика внедрения балльно-рейтинговой системы оценивания результатов обучения студентов ссуза // Актуальные вопросы современной педагогики: материалы IV Междунар. науч. конф., Уфа, ноябрь, 2013, էջ 170-173: URL: https://moluch.ru/conf/ped/archive/97/4425/

[10] **Чепурная М.Н.,** Рейтинговая система оценивания результатов обучения как средство повышения качественного профессионального образования // Инновационная наука, №10-1, 2021.

Հետազոտության մեթոդաբանություն: Տվյալ հետազոտությունը նպատակ ունի գնահատելու 2021–2022 թթ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում ՀՊՏՀ լեզուների ամբիոնի կողմից շրջանառության մեջ դրված լեզուների գնահատման բաղադրիչային-կուտակային համակարգի արդյունավետությունը, բացահայտելու դրա ուժեղ ու թույլ կողմերը: Այս նպատակն իրականացնելու համար հոդվածում կիրառվել են ՍՎՈՒԹ վերլուծության, ֆոկուս քննարկումների, հարցումների անցկացման և վիճակագրական մոդելավորման քանակական վերլուծության մեթոդները:

Ինչպես հայտնի է, ՍՎՈՒԹ վերլուծությունը ռազմավարական պլանավորման առանձին փուլ է, որը ենթադրում է տեղեկատվության գնահատում, կազմակերպում և դրա հիման վրա պլանավորում և իրականացում: Այսպիսով՝ ՍՎՈՒԹ վերլուծությունը ներառում է 4 տարր՝ ուժեղ ու թույլ կողմեր, հնարավորություններ և սպառնալիքներ: Գնահատման գործող համակարգի փորձաշրջանում աշխատել ենք արձանագրել այն գործոնները, որոնք նպաստում են դրա արդյունավետ կիրառմանը, ինչպես նաև վեր հանել այն խոչընդոտները, որոնք խաթարում են տվյալ գործընթացի սահուն իրականացումը՝ հաշվի առնելով, անշուշտ, այլ հնարավորություններ, որոնք տրամադրում է համակարգը:

Տվյալների հավաքագրումը ընթացել է նախ լսարանային դիտարկումների միջոցով՝ արձանագրելով ուսանողների արձագանքը և առաջընթացը համակարգի կիրառման ժամանակ, այնուհետև դասախոսների շրջանում ֆոկուս խմբերի քննարկումների միջոցով, ինչը թույլ է տվել կատարել նաև ընթացիկ շտկումներ ու հարմարեցումներ արդեն իսկ գործող համակարգում: Բացի այդ, կիսամյակի ավարտին հարցումներ են անցկացվել ՀՊՏՀ լեզուների ամբիոնի բոլոր դասախոսների (33), առաջին և երկրորդ կուրսերի ուսանողների (570) շրջանում՝ համակարգը կիրառելիս առաջ եկած խնդիրներն ու խոչընդոտները բացահայտելու, ինչպես նաև տվյալ համակարգը լավարկելու առաջարկներ ստանալու նպատակով: Հարցաթերթիկն ընդգրկել է առանձին հարցաշարեր ուսանողների և դասախոսների համար:

Վերլուծություն: ***Նախկին գնահատման համակարգից հրաժարվելու և նորին անցնելու նախադրյալները***

1. ՀՊՏՀ լեզուների ամբիոնի շրջանակներում դասավանդվող առարկաների նախկինում գործող գնահատման համակարգը թույլ էր տալիս մեկ գնահատականով ձևավորելու ակտիվության նիշը, որի պատճառով քաջատեղյակ ուսանողների զգալի մասը նախընտրում էր մեկ անգամ լավ պատրաստվել ու ստանալ մեկ բարձր գնահատական՝ այդպիսով ապահովելով տվյալ առարկայի վերջնական բարձր միավորը: Էլեկտրոնային մատյանը ընդամենը մեկ գնահատականի առկայությամբ ձևավորում է ուսանողի ակտիվության միավորը՝ այդպիսով ոչ ամբողջական պատկերացում տալով ուսանողի գիտելիքի վերաբերյալ:
2. Յուրաքանչյուր դասընթաց ենթադրում է որոշակի վերջնարդյունքներ, և, այս առումով, մեկ գնահատականը հնարավորություն չի տալիս գնա-

URL, https://cyberleninka.ru/article/n/reytingovaya-sistema-otsenivaniya-rezultatov-obucheniya-kak-sredstvo-povysheniya-kachestva-professionalnogo-obrazovaniya

հատելու այն գիտելիքը և հմտությունների շարքը, որոնք թիրախավորված են առարկայական ծրագրերում: Այլ կերպ ասած՝ մեկ գնահատականը չի կարող լիարժեքորեն արտացոլել, համապարփակ ու ընդգրկուն ներկայացնել թե՛ դասախոսի սովորեցրածը և թե՛ ուսանողի գիտելիքը տվյալ առարկայից:

3. Վերը նշվածով պայմանավորված՝ կարող ենք արձանագրել նաև, որ գնահատման նախկին համակարգի գործարկման պայմաններում չէին խրախուսվում ուսանողի բարեխղճությունը, կարգապահությունը: Ուսումնական ողջ կիսամյակի ընթացքում բարեխղճորեն սովորած, պարտաճանաչ ուսանողն ու մեկ պատասխանով իր համար վերջնական գնահատական ապահոված ուսանողը հայտնվում էին հավասար պայմաններում, ստանում նույն կամ մոտ գնահատական՝ այդպիսով խարխլելով նաև արդարության մասին պատկերացումները: Այսինքն՝ ստեղծվում էին անարդար, անհավասար պայմաններ, որտեղ, փաստորեն, գնահատվում էր ոչ թե իրական սովորողը, այլ ճարպիկը: Արդյունքում տեղի էր ունենում ուսանողների շահադրդման մակարդակի նվազում:
4. Մեկ գնահատականի շնորհիվ ակտիվության ապահովման գործոնը չէր խթանում ուսանողների ակտիվ հաճախելիությունը դասընթացին, ինչպես նաև ակտիվ մասնակցությունը:

Տվյալ հանգամանքներից ելնելով՝ անհրաժեշտություն առաջացավ մշակելու գնահատման նոր համակարգ, որը կօգներ լիարժեքորեն լուծելու այս խնդիրը՝ տարբեր բաղադրիչներով ստուգելով ուսանողի գիտելիքը և հստակ պատկերացում տալով տվյալ դասընթացի վերաբերյալ վերջինիս ձեռք բերած հմտությունների մասին:

Գնահատման նոր համակարգի մշակումը և ներդրումը

2021-2022 թթ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակից ՀՊՏՀ լեզուների ամբիոնն անցավ գնահատման բաղադրիչային-կուտակային համակարգին՝ այս սկզբունքը կիրառելով ամբիոնում դասավանդվող բոլոր լեզուների (հայերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն և ֆրանսերեն) գնահատման գործընթացն իրականացնելիս:

Վերոնշյալ համակարգի համար մշակվել են մի շարք չափանիշներ: Առավելագույնը ***12/8*** միավոր ակտիվություն ունեցող դասընթացի գնահատականը ձևավորվում է ըստ աղյուսակ 1-ում ներկայացված բաղադրիչների:

Աղյուսակ 1

Առավելագույնը 12/8 միավոր ակտիվություն ունեցող դասընթացի գնահատման բաղադրիչներ

1. Տնային աշխատանքի ստուգում (տեքստի վերարտադրում, վարժությունների կատարում, 5 տնային աշխատանք՝ յուրաքանչյուրը 0,6/0,4 միավոր)	0-3/0-2 միավոր
2. Մեկ շնորհանդես/պրեզենտացիա (գործարար առաջարկի հակիրճ ներկայացում՝ pitching)	0-3/0-2 միավոր
3. Գործարար նամակագրություն (I կիսամյակ - ռեզյումե, ինքնակենսագրություն, II կիսամյակ - ուղեկցող նամակ, նամակ-հարցում, III կիսամյակ - նամակ-բողոք, նամակ-հրավեր, IV կիսամյակ – նամակ-ներողամտության հայցում, նամակ-շնորհավորանք) (առաջադրանքի կատարման տևողությունը՝ 20 րոպե)	0-3/0-2 միավոր
4. Գրավոր թեստ՝ կիսամյակի ընթացքում ուսումնասիրած նյութի հիման վրա (առաջադրանքի կատարման տևողությունը՝ 30/20 րոպե)	0-3/0-2 միավոր

Այսպիսով՝ դասախոսը արձանագրում է կիսամյակի ընթացքում ուսանողի կուտակած միավորները՝ ըստ վերը նշված բաղադրիչների, և կիսամյակի ավարտին թե՛ թղթային, թե՛ էլեկտրոնային մատյանում նշանակում է միայն *մեկ գնահատական:*

Շնորհանդեսի գնահատման չափորոշիչները առավելագույնը *12/8 միավոր* ակտիվություն ունեցող դասընթացի համար սահմանվել են աղյուսակ 2-ում նշված համամասնությամբ:

Աղյուսակ 2

Շնորհանդեսի գնահատման չափորոշիչները առավելագույնը 12/8 միավոր ակտիվություն ունեցող դասընթացի համար

1.	Ներկայացումը ստեղծագործական է և տեսանելիորեն գրավիչ, կազմված է առնվազն տասը նկարից	0.3/0.2 միավոր
2.	Ներկայացումը հետաքրքիր է լսարանի համար	0.3/0.2 միավոր
3.	Տեղեկատվությունը ներկայացված է տրամաբանական հաջորդականությամբ	0.3/0.2 միավոր
4.	Ներկայացումն ունի ներածություն և եզրակացություն	0.3/0.2 միավոր
5.	Նյութի ծավալը բավարար է ընտրված թեման ներկայացնելու համար	0.3/0.2 միավոր
6.	Բովանդակությունը տեսանելիորեն հետաքրքիր է. տեքստային մասը սահիկներում կազմում է 10-30%	0.3/0.2 միավոր
7.	Ուսանողների ելույթներում/տեքստում օգտագործվում է թեմային համապատասխանող բառապաշար	0.3/0.2 միավոր
8.	Ուսանողները շնորհանդեսի շրջանակներում բովանդակալից պատասխաններ են տալիս դասախոսների և համակուրսեցիների հարցերին	0.3/0.2 միավոր
9.	Բոլոր նախադասությունները կառուցված են գրագետ և ունեն տարբերակիչ կառուցվածք	0.3/0.2 միավոր
10.	Ելույթն արտահայտիչ է, համապատասխանում է արտասանական նորմերին	0.3/0.2 միավոր
	Ընդհանուր	***3/2 միավոր***

Գործարար նամակագրության գնահատման չափորոշիչները առավելագույնը *12/8 միավոր* ակտիվություն ունեցող դասընթացի համար սահմանվել են աղյուսակ 3-ում նշված համամասնությամբ:

Աղյուսակ 3

Գործարար նամակագրության գնահատման չափորոշիչները առավելագույնը 12/8 միավոր ակտիվություն ունեցող դասընթացի համար

1. Հանձնարարության բովանդակային մասի լիարժեք կատարում (անդրադարձ է կատարվում գրության պահանջների բոլոր կետերին)	0.3/0.2 միավոր
2. Գրության կառուցվածք (ներածության, հիմնական մասի, եզրակացության պարտադիր առկայություն, պարբերությունների տրամաբանական բաշխում, նախադասությունների կապակցված շարադրում)	0.3/0.2 միավոր
3. Քերականական սխալների գնահատում (ճիշտ շարահյուսություն, ժամանակաձևերի ճիշտ գործածում, ուղղագրության անվրեպ գործածություն)	0.3/0.2 միավոր
4. Բառապաշար (համապատասխան լեզվական ոճի ճշգրիտ կիրառում, ծավալուն բառապաշար)	0.3/0.2 միավոր
5. Գրության համար պահանջվող նիշերի նվազագույն քանակը՝ 120 բառ	0.3/0.2 միավոր
Ընդհանուր՝ յուրաքանչյուր գրության համար	1.5/1 միավոր

Յուրաքանչյուր կիսամյակում 2 գրություն է նախատեսվում, ուստի կուտակային նիշը կարող է կազմել առավելագույնը 3/2 միավոր:

Լեզուների գնահատման բաղադրիչային–կուտակային համակարգի վերջին բաղադրիչը՝ թեստը, ընդգրկում է 4 տիպի առաջադրանք՝


1. ճիշտ է / սխալ է - (5 պնդում),
2. բառերի և դրանց սահմանումների համապատասխանեցում - (10 բառ՝ 12 միավոր ակտիվության դեպքում, 5 բառ՝ 8 միավոր ակտիվության դեպքում),
3. համապատասխան բառի տեղադրում նախադասություններում - (10 բառ՝ 12 միավոր ակտիվության դեպքում, 5 բառ՝ 8 միավոր ակտիվության դեպքում),
4. ճիշտ նախդիրների տեղադրում նախադասություններում - (5 նախադասություն):

12 միավոր ակտիվության դեպքում թեստի ընդհանուր գնահատականը կազմում է 3 միավոր, իսկ 8 միավոր ակտիվության դեպքում՝ 2 միավոր:

Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային համակարգը գործարկելուց 3 ամիս անց վերջինիս արդյունավետության մասին արձագանքներ ստանալու նպատակով անց է կացվել հարցում ՀՊՏՀ ուսանողների և դասավանդող կազմի շրջանում:

Դասախոսների համար նախատեսված հարցադրումներն իրենց պատասխաններով ամփոփված են հաջորդիվ.

1. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային համակարգի ներդրմամբ ուսանողների շրջանում մեծացել է տվյալ առարկայի տեսակարար կշիռը:



Գծապատկեր 1. ***Դասախոսների հարցման արդյունքներ***


2. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային համակարգի ներդրմամբ բարձրացել է ուսանողների՝ տվյալ դասընթացների յուրացման շահամիտման աստիճանը:

3. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային համակարգի ներդրման հետ մեկտեղ խթանվել են ամբիոնի կողմից առաջարկվող դասընթացների առարկայական ծրագրերի և դասավանդման մեթոդների ձևափոխման ու բարելավման գործընթացները:

4. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային համակարգի ներդրմամբ ավելի հստակ են դարձել տվյալ դաս-

ընթացի բովանդակությունը և վերջնարդյունքները, այսինքն՝ ինչ գիտի ուսանողը, ինչ պետք է սովորեցնել նրան:

5. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային գործող համակարգը թույլ է տալիս առավել օբյեկտիվորեն գնահատել ուսանողի գիտելիքը:



Գծապատկեր 2. ***Դասախոսների հարցման արդյունքներ***

6. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային գործող համակարգը թույլ է տալիս ուսանողի մեջ ձևավորել պատասխանատվություն՝ տվյալ առարկայի յուրացման առումով:

7. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային գործող համակարգը ուսանողին դարձնում է ավելի մրցունակ:

Վերոնշյալ հարցադրումներին տրվող պատասխաններով դասախոսական կազմի 93,9 տոկոսը հավանություն է տվել համակարգի ներդրման գաղափարին. համակարգն ավելի մոտիվացված, մրցունակ և պատասխանատու է դարձնում ուսանողին՝ միևնույն ժամանակ հնարավորություն ընձեռելով դասախոսին առավել օբյեկտիվ լինելու ուսանողին գնահատելիս: Համակարգը զարկ է տվել նաև ամբիոնի կողմից առաջարկվող դասընթացների վերանայման, լրամշակման, վերջիններում առկա բաղադրիչների ձևափոխման գործընթացներին:

8. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային գործող համակարգը լավ է աշխատում լեզուների միջին մակարդակի իմացություն ունեցող ուսանողների հետ:

9. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային գործող համակարգը լավ է աշխատում նաև լեզուների ցածր մակարդակի իմացություն ունեցող ուսանողների պարագայում:

Թեև 31 դասախոս (93.9 տոկոսը) կարծում է, որ գնահատման գործող համակարգը կիրառելի է միջին մակարդակի իմացություն ունեցող ուսանողների համար, այնուամենայնիվ, 20 դասախոս համարում է, որ այս համակարգը լավ է աշխատում նաև լեզուների ցածր մակարդակի իմացություն ունեցող ուսանողների դեպքում: 13 դասախոս դժվարանում է պատասխանել կամ էլ դեմ է այս գաղափարին: Քննարկումների արդյունքում որոշվեց անհատական մոտեցում ցուցաբերել նման ուսանողների նկատմամբ՝ հնարավորություն տալով վերջիններիս ներկայացնելու միայն գրավոր աշխատանք, ընդ որում՝ գրավոր հանձնարարությունների ընտրությունը թողնելով դասախոսի հայեցողությանը: Այսպիսով՝ լեզվի ցածր մակարդակի իմացություն

ունեցող ուսանողին կընձեռվի հնարավորություն՝ մասամբ կուտակելու միավորներ:

10. Կիսամյակի ընթացքում ուսանողների կողմից բոլոր բաղադրիչները կուտակելուց հետո արդյո՞ք լավ գաղափար է լրացուցիչ պատասխաններ ունենալու դեպքում այդ ուսանողներին տալ գնահատականներ, որոնք հաշվի կառնվեն ստուգարքի կամ քննության ժամանակ:

Դասախոսների 78.8 տոկոսը (26 դասախոս) կարծում է, որ վերոնշյալ գաղափարը ընդունելի է, քանի որ առկա են ակտիվ, օտար լեզվի լավ իմացությամբ ուսանողներ, որոնք կիսամյակի ընթացքում ունենում են նախատեսված հանձնարարություններից ավելի պատասխաններ, և դասախոսները, գրանցելով այդ գնահատականները, կարողանում են բոնուսային կարգով պարգևատրել տվյալ ուսանողին ստուգարքի կամ քննության ժամանակ:

11. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային գործող համակարգը բարելավելու նպատակով ի՞նչ առաջարկություններ ունեք:

Դասախոսների հարցման արդյունքում գրանցվել են հետևյալ առաջարկները.

ա) Հաշվի առնել յուրաքանչյուր լեզվի դասավանդման ընթացքում առաջ եկած և՛ խոչընդոտները, և՛ դրական կողմերը: Օրինակ՝ հնարավորություն տալ, որ ցանկության դեպքում շնորհանդեսը կարողանան ներկայացնել նաև խմբով՝ ընտրելով մեծ թեմա, պահպանելով ժամանակի տևողությունը և սլայդի քանակը ամեն ուսանողի համար:


բ) Բարձրացնել տնային աշխատանքների համար գնահատման նիշերը, շնորհանդեսը ներկայացնել երկու ուսանողով:

գ) Մեծացնել ամենօրյա պատասխանների գնահատման տեսակարար կշիռը՝ իջեցնելով գրավորինը (6 պատասխան՝ 0,5 միավորով, քանի որ կան ուսանողներ, որոնք ցանկություն ունեն լրացուցիչ պատասխանելու):

դ) Ունենալ հստակ ժամանակացույց որոշակի առաջադրանքների համար:


Ուսանողների համար նախատեսված հարցադրումները հետևյալն էին.

1. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային համակարգի ներդրման հետ մեկտեղ ավելի մեծ պատասխանատվությամբ եմ վերաբերվում տվյալ առարկաներին:



Գծապատկեր 3. ***Ուսանողների հարցման արդյունքներ***

2. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային համակարգի ներդրման արդյունքում հնարավորություն ունեմ նպատակաուղղված կերպով կատարելագործելու որոշակի լեզվական հմտություններ (շնորհանդես, նամակագրություն):



Գծապատկեր 4. ***Ուսանողների հարցման արդյունքներ***

Հարցվածների 49.6 տոկոսը (283 ուսանող) խորապես համոզված է, որ համակարգը բարձրացրել է պատասխանատվության զգացումը, և ուսանողները հստակ պատկերացնում են՝ լեզվական ինչ հմտություններ են զարգանում դասընթացի որոշակի փուլում (348 ուսանող):

3. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային համակարգի ներդրմամբ նվազել է տվյալ առարկաների ստուգարքին կամ քննությանը գերազանց ստանալու հնարավորությունը:

4. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային գործող համակարգում բաղադրիչները խելամիտ կերպով են բաշխված, ինչը համապատասխանում է դասընթացի բովանդակությանը:

5. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային համակարգի ներդրման արդյունքում ինքնուրույն աշխատանք ավելի շատ է կատարվում:

Ուսանողների 61.2 տոկոսը (349 հոգի) նշում է, որ համակարգի ներդրմամբ գերազանց գնահատական ստանալը բարդացել է, 13.7 տոկոսը դժվարանում է պատասխանել, իսկ 143 ուսանող կողմ չէ այս գաղափարին: Բաղադրիչների խելամիտ բաշխվածությանը, ինչպես նաև ավելի շատ ինքնուրույն աշխատանք կատարելու վերաբերյալ հարցադրումներին համաձայնել է հարցվածների կեսից ավելին (52.6 տոկոս/300 հոգի):

6. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային գործող համակարգն ավելի մրցունակ է դարձնում:

7. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային համակարգի ներդրման շնորհիվ ավելի հստակ ես պատկերացնում տվյալ դասընթացի բովանդակությունը և վերջնարդյունքները, այսինքն՝ ինչ գիտես և ինչ կսովորես այս դասընթացից:

323 ուսանող չի համարում, որ տվյալ համակարգը նպաստում է մրցունակ դառնալուն, մինչդեռ 40 տոկոսից ավելին դրական է արձագանքել: 289 ուսանող լավ չի պատկերացնում դասընթացների վերջնարդյունքները, 204

ուսանողի համար գնահատման համակարգը, թերևս, նպաստել է վերջնարդյունքների ավելի լավ պատկերացմանը:

8. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային գործող համակարգը թույլ է տալիս առավել օբյեկտիվորեն գնահատել ուսանողի գիտելիքը:

9. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային համակարգի ներդրումը ՀՊՏՀ-ում լավ գաղափար է:

Հարցվածների կեսից ավելին (54.4 տոկոսը) կարծում է, որ գնահատման բաղադրիչային-կուտակային համակարգի ներդրումը ՀՊՏՀ-ում հաջողված գաղափար է, ինչը թույլ է տալիս դասախոսին առավել օբյեկտիվորեն գնահատել ուսանողին:

10. Կիսամյակի ընթացքում բոլոր բաղադրիչները կուտակելուց հետո արդյոք կցանկանայիք լրացուցիչ պատասխաններ ունենալու դեպքում գրանցել գնահատականներ, որոնք հաշվի կառնվեն ստուգարքի կամ քննության ընթացքում:

450 ուսանող (78.9 տոկոսը) ողջունում է այս գաղափարը, մինչդեռ 65-ը (11.4 տոկոսը) դեմ են այս մոտեցմանը, ևս 55 հարցված (9.6 տոկոսը) դժվարանում է պատասխանել:

11. Լեզուների իմացության մակարդակի գնահատման բաղադրիչային-կուտակային գործող համակարգի բարելավման ի՞նչ առաջարկություններ ունեք:

Ուսանողների հարցման արդյունքում գրանցվել են առաջարկներ, որոնց քննարկմանն անդրադառնում ենք հաջորդիվ:

ա) Կցանկանայի, որ այս համակարգը գործեր նաև մյուս (հատկապես մասնագիտական) առարկաների պարագայում:

բ) Առաջարկում եմ որոշ առաջադրանքներ կատարել խմբային, քանի որ բարելավվում է աշխատանքի որակը, և ուսանողն ավելի մեծ հաճույքով է անում առաջադրանքը:

Հարկ է նշել, որ խմբային առաջադրանքների դեպքում գնահատման օբյեկտիվության գործոնը նվազում է, քանի որ, օրինակ, շնորհանդեսների տարբերակով հարցման դեպքում դասախոսը չի կարող ճշգրիտ իմանալ յուրաքանչյուր ուսանողի կատարած աշխատանքի չափը և բովանդակությունը:

գ) Համակարգը, ընդհանուր առմամբ, արդյունավետ է: Բայց կցանկանայի փոփոխություն լիներ տեսական նյութը պատմելու գնահատման մեջ, որպեսզի ուսանողին հնարավորություն տրվի լրացուցիչ գնահատականներ վաստակելու, քանի որ 5 դաս պատասխանելուց հետո հաջորդ պատասխաններն այլևս չեն գնահատվում: Ցանկալի է, որ Ուսանողների ակտիվ լինելու և լրացուցիչ պատասխանների դեպքում տրվեն լրացուցիչ միավորներ:

Վերոնշյալ առաջարկը հնչել է նաև դասախոսների հարցումն իրականացնելիս, և քննարկման արդյունքում որոշվել է ուսանողին հնարավորություն ընձեռել կուտակելու լրացուցիչ միավորներ, որոնք հաշվի կառնվեն ստուգարքի կամ քննության ժամանակ:

դ) Շնորհանդեսների համար տրամադրել թեմաների հստակ ցանկ, որպեսզի ավելի հեշտ կողմնորոշվենք ընտրության հարցում:

Շնորհանդեսների թեմաների ընդհանուր ուրվագիծը (գործարար ոլորտին վերաբերող իրողություններ, հայտնի, հաջողությունների հասած անհատներ, ստարտափներ, հայտնի ընկերություններ և այլն) տրվում է ուսանողներին կիսամյակի սկզբում: Բացի այդ, ուսանողները կարող են առաջնորդվել դասերում առկա թեմատիկայով (օրինակ՝ գործարար ոլորտի մշակութային տարբերություններ, գործարար վարվելակերպ և այլն): Ավելին՝ դասընթացի ավարտական/ամփոփիչ կիսամյակում ուսանողներից պահանջվում է «փիչինգ անել» իրենց բիզնես գաղափարները:

ե) Կարծում եմ՝ նպատակահարմար է ուսանողին տալ հնարավորություն ուղղելու ստացած ցածր միավորը: Չէ՞ որ կան որոշակի գործոններ, որոնց վրա ստացած միավորը ունի որոշակի ազդեցություն:

Վերոնշյալ առաջարկը գործարկվել է փորձաշրջանի ընթացքում. որոշ ուսանողներ կիսամյակի սկզբում բավարար կերպով չէին ներկայացրել շնորհանդեսը. ստացել էին 1 միավոր՝ 2-ի փոխարեն: Վերջիններիս ցանկությամբ կիսամյակի վերջում տրվեց հնարավորություն՝ վերստին կազմակերպելու շնորհանդես՝ այլ թեմայով: Այդկերպ շատ ուսանողների հաջողվեց բարձրացնել իրենց գնահատականը:

Հարցման արդյունքների հիման վրա կատարվել է նաև ՍՎՈՒԹ վերլուծություն, որը ներկայացված է ստորև.

Աղյուսակ 4

ՀՊՏՀ լեզուների գնահատման համակարգի ՍՎՈՒԹ վերլուծության արդյունքներ[11]

Ուժեղ կողմեր	***Թույլ կողմեր***
• Դասախոսը հստակ պատկերացնում է աշխատանքի հաջորդականությունը (առկա է գիտելիքի ստուգման հստակ ժամանակացույց): • Ուսանողի կարգապահության և կազմակերպվածության մակարդակը բարձրանում է (ուսանողը հստակ պատկերացնում է՝ երբ և ինչպես պետք է կուտակի իր միավորները. արդյունքում՝ ապահովվում է հաճախելիության բարձր մակարդակ և ակտիվ ներգրավվածություն դասին): • Ուսանողի անաչառ գնահատման գործընթացը լավարկվում է (այլևս անհնար է ձևավորել ակտիվություն մեկ գնահատականի հիման վրա, անհրաժեշտ է տարբեր բաղադրիչներով կուտակել վերջնական միավորը): • Առողջ մրցակցային մթնոլորտ է ձևավորվում (ուսանողը ավելի շահագրգռված է ակտիվ մասնակցել դասին, ինչը կապահովի բարձր գնահատական):	• Առկա չէ հստակ ժամանակացույց որոշակի հանձնարարությունների համար: • Տեխնիկապես հագեցած լսարանների քանակը բավարար չէ: • Լեզուների իմացության ցածր մակարդակ ունեցող ուսանողների համար որոշ հանձնարարություններ հաղթահարելի չեն:

[11] Աղյուսակը մշակել են հեղինակները:

Հնարավորություններ	***Սպառնալիքներ***
• Տվյալ համակարգը կարող է կիրառվել ՀՊՏՀ այլ ամբիոնների կողմից: • Լրացուցիչ միավորները կարելի է ընդգրկել ստուգարքի կամ քննության միավորների մեջ: • Տվյալ համակարգի ճկունության շնորհիվ կա շտկումների և լրամշակումների հնարավորություն (բաղադրիչների բովանդակության, քանակի և տեսակարար կշռի փոփոխություն): • Առկա է միևնույն բաղադրիչից արդեն իսկ կուտակած միավորները / գնահատականը բարձրացնելու հնարավորություն:	• Արտակարգ իրավիճակների (համավարակ, պատերազմ) դեպքում կարող է առաջ գալ որոշ առաջադրանքների գնահատման դժվարություն:

Եզրակացություններ: Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ գնահատման գործոնը կարևորագույն տեղ է զբաղեցնում հատկապես լեզուների դասավանդման գործընթացում, քանի որ լեզուների իմացությունը ինքնին ներառում է որոշակի գիտելիքի, հմտությունների և կարողությունների (կարդալ, լսել, խոսել, գրել) տիրապետում, ինչը մեզ թույլ տվեց դրանք, որպես բաղադրիչներ, շահավետ բաշխել գնահատման գործող համակարգում: Փորձաշրջանի գործարկման, դասախոսների և ուսանողների շրջանում անցկացված հարցման, ֆոկուս քննարկումների և ՍՎՈՒԹ վերլուծության արդյունքում լեզուների իմացության գնահատման բաղադրիչային-կուտակային համակարգում առաջարկվում է կատարել հետևյալ լրամշակումները և փոփոխությունները.

- Շնորհանդեսի գնահատման «Ներկայացումը ստեղծագործական է և տեսանելիորեն գրավիչ» (առնվազն տասը նկար) չափանիշում «ստեղծագործական» բառը շնորհանդեսը գնահատելու շրջանակներում մեկնաբանել որպես հետաքրքիր, օրինակ՝ հարցերով, նկարների օգնությամբ ուղղորդող սկիզբ (lead-in) ունեցող ելույթն ավելի բարձր գնահատելու հիմք, քան թեման սովորական կերպով ներկայացնելու պարագայում է:
- Պրեզենտացիայի գնահատման «Ներկայացումը հետաքրքիր է լսարանի համար» չափանիշը քննարկելիս հիմնվել շնորհանդեսի վերջում թեմայի վերաբերյալ համակուրսեցիների հնչեցրած հարցերի քանակի և բովանդակության վրա:
- Յուրաքանչյուր բաղադրիչի հարցման համար տրամադրել որոշակի ժամանակահատված՝ որոշակի օրեր: Այդ դասերից բացակայելու դեպքում ուսանողը այլևս իրավունք չի ունենա լրացնելու իր բացթողումները, եթե չներկայացնի բժշկի կողմից տրված տեղեկանք: Հարգելի պատճառով բացակայող ուսանողներին կիսամյակի վերջում տրամադրվում է պարտքերի մարման մեկ օր, որի ժամանակ ուսանողները հնարավորություն կունենան կուտակելու իրենց բաց թողած միավորները:
- Եթե ուսանողը կիսամյակի ընթացքում ոչ միայն կուտակում է անհրաժեշտ միավորներն ամբողջությամբ, այլ նաև ունենում է լրացուցիչ պատասխաններ, ապա այդ լրացուցիչ միավորներն ընդգրկվում են ստուգարքի կամ քննության միավորների մեջ:

- Եթե ուսանողը կիսամյակի ընթացքում որոշ բաղադրիչներից կուտակել է ցածր գնահատական, սակայն ցանկություն ունի շտկելու իրավիճակը, ապա հնարավորություն տալ նրան դա անելու: Այսինքն՝ ուսանողի լավ պատասխանի դեպքում չեղյալ համարել նախկին գնահատականը և նշանակել նորը:

Օգտագործված գրականություն

1. Black Paul, Wiliam Dyllan, Assessment and Classroom Learning, Assessment in Education: Principles, Policy & Practice, 1998. URL: https://www.tandfonline.com/doi/abs/10.1080/0969595980050102
2. Fisher Michael R. Jr., Student Assessment in Teaching and Learning. URL: https://cft.vanderbilt.edu/student-assessment-in-teaching-and-learning/
3. Maki Peggy L., Developing an Assessment Plan to Learn about Student Learning. The Journal of Academic Librarianship, 28.1, 2002. ScienceDirect. Web. The Journal of Academic Librarianship.
4. Ахмедханова С. М., Рейтинг как одна из технологий объективной оценки личностных достижений учащихся // Молодой ученый, № 12 (59), 2013, URL: https://moluch.ru/archive/59/8335/
5. Клепикова Е.И., Система оценивания учащихся // Образовательная социальная сеть nsportal.ru URL https://nsportal.ru/shkola/materialy-metodicheskikh-obedinenii/library/2014/02/12/sistema-otsenivaniya-uchashchikhsya
6. Майков Е.В., Накопительная система оценки успеваемости студентов // Вестн. Моск. ун-та., сер. 20, Педагогическое образование, №2, 2008. URL: https://cyberleninka.ru/article/n/nakopitelnaya-sistema-otsenki-uspevaemosti-studentov/
7. Малышева Т. В., Практика внедрения балльно-рейтинговой системы оценивания результатов обучения студентов ссуза // Актуальные вопросы современной педагогики: материалы IV Междунар. науч. конф. (г. Уфа, ноябрь, 2013 г.). URL: https://moluch.ru/conf/ped/archive/97/4425/
8. Сазонов Б. А., Балльно-рейтинговые системы оценивания знаний и обеспечение качества учебного процесса // Высшее образование в России, №6, 2012. URL: https://cyberleninka.ru/article/n/ballno-reytingovye-sistemy-otsenivaniya-znaniy-i-obespechenie-kachestva-uchebnogo-protsessa
9. Чепурная М.Н., Рейтинговая система оценивания результатов обучения как средство повышения качественного профессионального образования // Инновационная наука, №10-1, 2021, URL: https://cyberleninka.ru/article/n/reytingovaya-sistema-otsenivaniya-rezultatov-obucheniya-kak-sredstvo-povysheniya-kachestva-professionalnogo-obrazovaniya
10. Шилова Н.С., Традиционная и инновационная система оценивания учащихся // Образовательная социальная сеть nsportal.ru URL: https://nsportal.ru/shkola/obshchepedagogicheskie-tekhnologii/library/2012/09/23/traditsionnaya-i-innovatsionnaya

ЛУСИНЕ АРУТЮНЯН
Заведующая кафедрой языков АГЭУ,
доктор филологических наук, профессор

РУЗАННА САРКИСЯН
Доцент кафедры языков АГЭУ,
кандидат педагогических наук

АЛЛА МКРТЧЯН
Доцент кафедры языков АГЭУ,
кандидат педагогических наук

ЛИЛИТ АКОБЯН
Ассистент кафедры языков АГЭУ

Экспериментальное обучение: внедрение компонентно-накопительной системы оценивания владения языками на примере АГЭУ.– Результат каждого курса предполагает усвоение обучающимся содержания и достижение конечных результатов данного курса. Выбор форм и подходов оценивания конечных результатов всегда был в центре внимания исследователей на всех этапах истории развития методики обучения. В данной статье рассматривается проблема оценивания в ходе обучения языкам. В рамках экспериментального обучения кафедра языков АГЭУ со второго семестра 2021-2022 уч.г. инициировала внедрение компонентно-накопительной системы в процесс обучения языкам. Опираясь на результаты апробации, а также опросы среди преподавателей и студентов, обсуждения в фокус-группах и SWOT-анализ, авторы предлагают ввести некоторые доработки и модификации с целью улучшения и повышения эффективности данной системы.

Ключевые слова: *знание языков, преподавание языков, система оценивания знания языков, экспериментальное обучение*
JEL: D83, I21, I23
DOI: 10.52174/1829-0280_2022.4-156

LUSINE HARUTYUNYAN
Head of the Chair of Languages of ASUE,
Doctor of Philology, Professor

RUZANNA SARGSYAN
Associate Professor of the Chair of Languages of ASUE,
PhD in Pedagogy

ALLA MKRTCHYAN
Associate Professor of the Chair of Languages of ASUE,
PhD in Pedagogy

LILIT HAKOBYAN
Assistant of the Chair of Languages of ASUE

Experimental Teaching: Introduction of the Componential-Cumulative Assessment System of Language Competence (based on the example of ASUE).– The result of every course implies aquisition of course contents or learning outcomes by the learner/student. The choice of types and approaches of assessment of the aquisition level of learning outcomes have been a thorny issue throughout all the stages of the history of teaching methodology. The paper addresses the problem of language competence assessment. During the second semester of the 2021-2022 academic year, within the framework of experimental teaching, the ASUE Chair of Languages initiated the implementation of a new componential-cumulative assessment system for language courses. Based on the results of the approbation of the system, the survey conducted among teachers and students, as well as focus group discussions and SWOT analysis, the authors make several suggestions and adaptations to make the system more applicable and effective.

Keywords: *language competence, language teaching, assessment system of language competence, experimental teaching*
JEL: D83, I21, I23
DOI: 10.52174/1829-0280_2022.4-156